Չորրորդ տարի № 26 երեքշաբթի 31 Դեկտեմբերի 1885

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՐ

Տարեկան բաժանորդագինն է հինգ րուբլի: Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՆՔԻ» խմբագրատանը և կենտրոնական գրավաճառանոցում: Յատուկ թղթակցութիւնները դիմում են՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ“.

Առանձին համարները 10 կ. Յայտարարութիւնների տառին 2 կ.

1886-ԻՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ

ՄԻԵՒՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՀԵՏԵՒԵԱԼ ՊՐՕԳՐԱՄՄԱՅՈՎ.

I. Տեղեկութիւններ կառավարութեան գործողութիւնների և օբէնսդրական միջոցների մասին:—II. Առաջնորդող յօդուածներ հասարակական կեանքի նշանաւոր հարցերի վերաբերութեամբ:—III. Թղթակցութիւններ հայաբնակ տեղերից. ընդհանուր տեսութիւն հայ և օտար լրագիրների տեղեկութիւնների և կարծիքների:—IV. Տնտեսական և առևտրական հարցերի քննադատութիւն:—V. Յօդուածներ ժողովրդական կրթութեան վերաբերութեամբ:—VI. Ազատ տեսութիւն. յօդուածներ և տեղեկութիւններ արտասահմանեան հասարակական և քաղաքական կեանքի նշանաւոր անցքերի մասին:—VII. Կրնտիկա և մատենախօսութիւն:—VIII. Ֆելիետօն:—IX. Զանազան լուրեր:—X: Յայտարարութիւններ:

Տարեկան բաժանորդագինն է 5 ր.
Վեց տարուանը . . . . . 3 ր.

Թիֆլիսում ստորագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «կենտրոնական գրավաճառանոցում»:

Յատուկ յօդուածներ դիմում են՝ Тифлисъ. въ Редакцію „Арцаганкъ“.

Արտասահմանից՝ Tiflis. Redaction du journal „ARDZAGANG“.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռափայէլ Պատկանեան: Յօբելեան:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Հայ-կաթոլիկք եկեղեցիները և ծխոց թիւը: Լեփլեանդեանց ուսումնարանները: Նկարչութիւնը մեր ուսումնարաններում: Վարժուհիների և ուսուցչուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան ընդհանուր ժողովը: Նամակ խմբագրութեան: Կերսէն:—ՖԵԼԻԵՏՕՆ: Հայոց ընտանեկան կեանքը վերոց քրոնիկոն:—ԸՆԴՐԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ: „Մեզ հայատառանին“ որպէս գաղտնի քաղաքական հարցերում:—ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ *)

ԱՐԹՈՒՐ ԼԱՅՏՍՏԻ

(Գերմաներէնից)

Հայերն սովորաբար արևելեան փերեզակներ են կոչվում (չարչի, բազարջի), և իրաւ՝ թէև մասամբ զուրկ չեն փերեզակութեան ոգուց, բայց և այնպէս նոքա գիտեն գեղեցիկը գնահատել և խնամել: Նոցա հոգեկան կեանքի մէջ շատ ծանրութիւն է երևում. նոքա նախամեծար են համարում հաստատունը, էականը, ներքին արժէք ունեցողն և թշնամի են ամեն բանի, ինչ որ ճոռոմ է և փքուած: Նոցա գրականական ճաշակի և մտային գործունէութեան մասին լաւ վկայութիւն է տալիս արդէն և այն հանգամանքը, որ ժամանակակից հայ գրագէտների մի նշանաւոր մասն գերմանական ո-

*) Այս յօդուածէ արդոյ հեղինակին, որ այժմ Թիֆլիս է գտնվում, մտադիր է հետզհետէ տոյնօրինակ մի արդի գրականութեան վերաբերեալ համառօտ տեսութիւններ հրատարակել Լէյպցիգում տպուող „Das Magazin für die Litteratur des In—und Auslandes“ կոչուած անուանի շաբաթագրքի մէջ, որից և հանում ենք այժմեաւորին փորձը: Իւր ուսումնասիրութեան արդիւնքը նա պիտի լոյս ընծայէ յետոյ մի առանձին գրքով առաւել մանրապատում և մշակուած:

Փ. Վ.

գուն է հետևում։ Համարեա թէ բոլոր Կովկասեան ականաւոր հայ գրագէտներն ուսել են գերմանական բարձրը դպրոցներում և շատ առմամբ գտանվում են գերմանական գիտութեան ազդեցութեան տակ։ Այս ազդեցութիւնն սկիզբն է առել մօտաւորապէս յիսուն թուականներին և առաջին հայ մատենագիրն, որ դիմել էր գերմանական կրթութեան՝ հռչակաւոր Ստեփանոս Նազարեանցն էր։ Իսկապէս նա էր այս ուղղութեան բուն առաջնորդն, և նա մի ճշմարիտ եռանդով ձգտում էր գերմանական գրականութեան և գիտութեան սէր արծարծելու հայ երիտասարդների մէջ։ Եւ այս բանում նա յաջողուեցաւ մտամբ. բայց որովհետև նա բաւական օտարացած էր հայկական կեանքից և իւր ձգտումների մէջ անշրջատես էր, ուստի շատ էլ թշնամիներ ունեցաւ։ Նա չէր հասկանում իւր ազգակիցների բուն հոգեկան կարիքն և չափազանց յափշտակուած լինելով գերմանական կրթութեամբ, չէր կարանում տեսնելու այն խոր վիհն, որով անջատուած են իրարուց մի գերմանական և մի արևելեան ազգի ոդիները։ Այսու հանդերձ նորա գործունէութիւնն աւարտիւն չդմնաց հայոց գրականութեան յետագայ զարգացման նկատմամբ և նորա ազդեցութեան տակ աճող հայ գրագէտների խումբըն գերմանական գիտութեան և գրականութեան տարազներին հետևելով առաջ գնաց։

Այդ խմբից է նաև Ռափայէլ Պատկանեանն, որ մի շատ նշանաւոր տեղ է բռնում արդի հայ գրագէտների շարքում։ Նա ծագում է մի բանաստեղծական գերդաստանից, պատճառ որ նորա պապն էլ, հայրն էլ քերթողական շնորհ ունէին։ Իւր բարձրագոյն կրթութիւնը նա ստանում է Դորպատի համալսարանում, ուր նորա հետ միասին ուսանում էին և ուրիշ մի քանի հայ երիտասարդներ. դոքա բոլորն էլ համարում էին իրանց մատենագրութեան կոչման տէր և փորձում էին իրանց գրիչները։ Սակայն այդ շրջանից միայն Ռափայէլ Պատկանեանն է դուրս գալիս իբրև իսկական բանաստեղծ և մատենագիր։

Ռափայէլ Պատկանեանն իւր երիտասարդ հասակում ակներև գտանուել է գերմանական ռօմանտիզմի ազդեցութեան ներքոյ, որին պարզ ապացոյց են նորա այն միջոցին յօրինած քնարերգական ոտանաւորները։ Ժամանակ անցնելուց յետոյ, երբ նա առաւել խոր հայեացք ձգեց իւր ազգի հոգու մէջ և ի մօտոյ ճանաչեց դորա կեանքի մի քանի ստուերային կողմերը, նա առ միշտ թողաւ ռօմանտիկայի հովիտներն և անցաւ երգիծանական—վարդապետական ուղղութեան։ Նա յայտնի է և իբրև վիպասան. սակայն վիպասանական բանաստեղծութեան մէջ նոյն յաջողութիւնը չունի, ինչ որ ունէր որպէս քնարերգակ։

Նորա բոլոր երկերից ամենագերազանցը քնարական քերթուածներն են. դոքա հրապուրիչ են իրանց վսեմ թռիչքով, շողշողուն գոյների պերճութեամբ, գեղարուեստական ձևով և ըստ մեծի մասին բուն արևելեան երանգով *)։

Սիրերգութեան մէջ Պատկանեանն մի գիւրայոյզ, սրտեռանդն և կորովաբան արևելցի է, որ իւր բոլոր ներքին տագն խօսքերի մէջ է թափում և գտնում է մտահար համեմատութիւններ և գոյներ իւր զգացումներն և սիրականի հրապոյրներն նկարելիս։ Տխրագին են նորա քնարի նուագները, երբ նա երգում է հայրենիքը, որ շատ բնական է հայրենի երկրից հեռու ապրող մի բանաստեղծի համար։ Հայաստանի բնական գեղեցկութիւնները վառվռուն գոյներով են յառաջ գալիս նորա երգերի մէջ, և բանաստեղծն արդարև յափշտակում է մեզ հարաւային պերճ դաշտանկարի և Ս.Լրարատի վսեմութեան հոյակապ պատկերներով։

Վերջին թուրք-ռուսական պատերազմի ժամանակ Պատկանեանն յօրինեց տաճիկների դէմ ուղղուած «Ազատ երգեր», որոնցից մի քանի ամսուայ մէջ 8000 օրինակ վաճառուեցաւ։ Պատկանեանն իւրաք ամենաժողովրդական հայ բանաստեղծներից մէկն է և նորա երգերից շատերն երգւում են ամբողջ ազգի մէջ։

Երգիծական երգերի մէջ նա յարձակվում է մանաւանդ կրթուած հայ հասարակութեան դէմ։ Նա զօրեղ հարուածներ է տալիս միայն եւրոպական կրթութեան արտաքին փայլով շատացող դատարկասուն jeunesse dorée ին (ոսկեզօծ երիտասարդներին) և կծու ճշմարտութիւն է ասում «եւրոպական դարձած» հայ աղջիկներին, որոնք լոկ զուարճութեան ետևից են ընկած և շռայլութեան մէջ չափ չգիտեն։ Բանաստեղծի մտրակիչ խօսքերն իրաւացի են, պատճառ որ սևաչեայ հայուհիներից շատերն արդարև կործանում են, թէ բուն լուսաւորութիւնը շռայլութեան և օտարամուտ պաճուճանքի մէջ է։

Պատկանեանն գրել է և մի պատմական բանաստեղծութիւն «Ջալ վարդան Մամիկոնեանի մահը» վերնագրով։

Նորա արձակ վէպերն լի են կենդանութեամբ և ռէալական են։

Պատկանեանի մատենագրական գործունէութիւնն մի ժամանակ շատ ժիր էր. իւր երկար հեղինակութեան միջոցին նա հրատարակել է և լրագիրներ և առ հասարակ շատ ծառայութիւն է մատուցել հայ գրականութեան։ Այս պատուական քերթողի բանաստեղծական զօրութիւնն կարծես թէ լեկուել է այժմ. նա ապրում է մի շատ անձուկ և տաժանելի դրութեան մէջ։ Արևելքի ամենահարուստ վաճառական կոչուած հայերն մինչև այս օրս դեռ չեն հասկացել, որ բարոյապէս

*) Այստեղ Գերմանացի հեղինակը յառաջ է բերում պ. Ռ. Պատկանեանի ոտանաւորներից մի քանի աքանչելի Թարգմանութիւններ, որոնք պատիւ են բերում Թէ Թարգմանչի ձիրքին և Թէ գերմանական լեզուի ամենայն հարստութեան և ճկունութեան։

Փ. Վ.

պարտական էին դիւրացնելու իրանց ամենամեծ բանաստեղծի նիւթական վիճակը։

Փ. Վ.

ՅՕԲԵԼԵԱՆ

Հայերիս շռայլութիւնը տեսնող օտարականին նեղելի է կարծել, թէ մենք «Արևելքի ամենահարուստ վաճառականներն» ենք։ Մենք հարկաւ առաւել լաւ գիտենք, թէ որքան հեռու է ճշմարտութիւնից այդ սարսափուած կարծիքը։ Սակայն ազգոյ հեղինակի նկատողութեան արժէքն դորանով բնաւ չէ նուազում։ Հաւրիւտ ենք թէ ոչ—մենք պարտական ենք և կարող ենք նիւթական կեանքի դառնութիւններից ազատ պահել մեր մտաւոր մշակներին, որոնք բարի ծառայութիւն են մատուցել մեր լեզուի և մտքի զարգացման։ Անմոռաց Պէշիկթաշլեանը յետին չքաւորութեան մէջ մեռաւ, Աբովեանցն իւր դառնակսկիծ կեանքի մէջ մի թեթև օր չըտեսաւ, երիտասարդ Դուրեանն տգէտութեան մէջ շունչ փչեց, մեր սիրելի Իփէքճեանն գրեթէ մի կտոր հացի կարօտ վախճանուեցաւ—էլ ո՛ր մէկին յիշենք հայ գրականութեան նահատակներից... Սմօթ չէ՞ մեզ, որ այժմ մի օտարականից ազգասիրութիւն պիտի լսենք մեր երախտամոռութեան մասին դէպի մեր ազգային բազմարդիւն բանաստեղծը, որի սրտառուչ քնարի ձայնը կրկնելով մենք սովորել ենք հայերէն երգել, հայերէն մտածել և հայի պէս զգալ։ Ա՛ռնենք մեր սեռունդը։ Ո՞վ մեզնից դեռ դպրոցական սեղանի վերայ անգիր չէ սերտել և չէ սիրել Գամառ-Քաթիպալին, և ո՛վ է այն բանաստեղծն, որ ոգևորում է և՛ մեզ յաջորդող նոր սերնդին, եթէ ոչ դարձեալ նոյն Գամառ-Քաթիպան։ Եթէ ամեն մի հայ, որ թէ՛ արտաքին և՛ թէ խնդութեան րոպէներին Գամառ-Քաթիպալի երգերով է արտայայտել իւր վիշտն և հըբճռանքը, կամենար նաև դնել գէթ մի մի հատոր այդ երգերից,—բանաստեղծն այս օր մի անկարօտ կեանք կը վարէր։ Բայց նա այժմ ոչ թէ այդ հատորներից է ապրուստ ստանում, այլ հայ ուսուցչի աղքատին ոտճկից, որ հազիւ է բաւում մի երիտասարդ մարդու անհրաժեշտ սէտքերին, ո՛ւր մնաց՝ բազմաթիւ ընտանիքով բեռնաւորուած յոգնատանջ աշխատաւորին։ Թող ներէ մեզ պ. Պատկանեանն, որ համարձակվում ենք խօսել հրապարակաւ այս փափուկ հարցի վերայ։ Մենք գիտենք, որ նա

. . . «Միշտ հըպարտ՝ կըմնայ հաստատուն,
Հանճարն է նորա միակ ձեռնածուն.
Անդողդոջ ոտքով կ՝անցնէ այս աշխարհ
Հոգին անվրդով, ճակատը պայծառ.
Եւ մինչև վերջին րոպէն իւր կենաց
Սըրտից չի հանիլ հառաչանք, ոչ լաց».

Բայց և այնպէս լռելն մենք յանցանք համարեցինք մի օտարականի յանդիմանութիւնից յետոյ .... Մեզ առաւել լաւ թուեցաւ ենթարկուիլ մեր բարեկամի տհաճութեան, քան թէ մնալ մի օտար մարդու արդար կշտամբանքի բեռի տակ։ Ուստի այս տողերով մենք հրաւէր ենք կարդում այն բոլոր հայերին, որոնց սրտում գէթ մի անգամ արձագանք է գտել «Մայր-Աբաքսի» երգչի քնարը, յիշել նորան և երախտապարտ լինել նորան մի վայելուչ գործով այն սուրբ զգացմունքների փոխարէն, որ նա յարուցել է մեր սրտում։

Մեր մէջ անսովոր չեն յօբելեանի տօներն։ Եթէ հայերիս մէջ կայ մի մատենագիր, որ իւր երկարամեայ գրականական գործունէութեամբ լիովին արժանի է դարձել տօնուելու և երախտագիտութեան շօշափելի նշաններ տեսնելու հայ ազգից—դա մեր Գամառ-Քաթիպան է։ Արդէն քսանհինգ տարի է, որ նա գրեթէ մենակ ամուր բռնած ունի հայ բանաստեղծութեան դրօշակն ռուսահաբնակ հայերիս մատենագրութեան մէջ։ Ա՛հա մի արդար իրաւունք նորա համար՝ յարգուած լինելու հայ ազգից, և մի յարմար առիթ մեզ համար—գործով հատուցանելու նորան մեր երախտագիտութեան ազգային պարտքը։ Յուսով ենք, որ մեր բոլոր ազգային մամուլն էլ միաձայն հրաւէր կը կարդայ հայ հասարակութեան «Գամառ-Քաթիպալի 25 ամեայ յօբելեանի» պատրաստութիւն տեսնելու համար։ Սա մի պարտք է, որին ըստ չափու կարողութեան մասնակցելուց հազիւ թէ հրաժարուի հայի անուն կրող մի մարդ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ԾԽՈՑ ԹԻՒԸ

Անդրկովկասում երկսեռ հայ կաթոլիքները հաշվում են մօտ 35,000 հոգի։ Նոքա զետեղուած են Թիֆլիզի և Երևանի նահանգներում, Ղարսայ վիճակում և Բուրթայիսու նահանգի Բաթումեան և Արտուինեան շրջաններում։—Հայ կաթոլիքների հոգևոր գործոց կառավարութեան համար այս բոլոր տարածութիւնը չորս յարջորդութեանց է բաժանած, որոնք ենթադրվում են Տիրասպոլի եպիսկոպոսին և մի եպիսկոպոսական թեմի Արտուինի քաղաքում։ Բոլոր հայ-կաթոլիք եկեղեցիներում աստուածպաշտութիւնը կատարվում է հայ լեզուով այն քահանաների ձեռքով, որոնցից Անդրկովկասի չորս յարջորդութեանց մասինը ձեռնադրվում են Սարատով, իսկ Արտուինի եպիսկոպոսական թեմինը Թիւրքիայում։ Սարեւ

Տեղւոյս վիճակագրական մասնաժողովի ձեռքով հաւաքուած այս տեղեկութիւնները, որոնք Կովկասեան կոչուած ռուս օրագրի մէջ լոյս են տեսել, անշուշտ առանձին հետաքրքրութիւն կունենան մեր ընթերցողների համար։

զետեղուած եկեղեցեաց ցուցակում առաջ են բերուած, նոցա հիմնարկութեան ժամանակը, թէ որ սուրբի անունով են նոքա կառուցուած և ծխականների թիւը։

1) ԱԽԱԼՑԽՈՑ ՅԱՋՈՐԴՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՔԸ.

Ախալցխայ գաւառում

Ս. Յովհաննու Մկրտչի. քարաշէն. 1750 թուին. ծխոց թիւը 986.

Վերացման Խաչի. քարաշէն. 1866 թ. ծուխ 710.

Վերափոխման. քարաշէն. 1836 թ. ծուխ 931.

Ս. Խաչի. քարաշէն. 1691 թ. ծուխ 272.

Ախալցխայում ընդ ամենը ծխոց թիւն է 2,909։

Գյուղերում.

Աբաթխևի, յանուն ս. Խաչի, քարաշէն, 1870 թ. ծուխ 122.

Ծղալթբիլի, յանուն Փրկչի, քար., 1849 թ. ծ. 675.

Սուփլիս, յանուն Աստուածամօր, քարաշէն, 1843 թ. ծուխ 326.

Վալէ, յանուն Աստուածամօր, քարաշէն, 1862 թ. ծուխ 509.

Ծինուբան, յանուն Աստուածամօր, քարաշէն 1869 թ. ծուխ 189.

Նէօխրէք, յանուն Փրկչի, քար., 1869 թ. ծ. 251.

Ուդէ, յանուն Աստուածամօր, քարաշէն, 1860 թ. (նորան կից մատուռ յանուն ս. Գէորգայ) ծուխ 964.

Սրալ, յանուն ս. Յովսէփայ, կառուցուած 1862 թուին, ծուխ 379.

Բալաջուր, եկեղեցին մասնաւոր տան մէջ. ծ. 42.

Աբասթումանի, եկեղեցին յանուն Աստուածածնի, փայտաշէն, կառուցուած 1866 թ. (Հանքային ջրերին այցելողների համար) ծուխ 27.

Ամբողջ յայորդութեան մէջ ծխոց թիւն է 3,484.

2) ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՅԱՋՈՐԴՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՔԸ.

Գյուղերում.

Խիզաբաւրա, յանուն ս. Աստուածածնի, քարաշէն. 1840 թ. ծուխ 1,120.

Ալաստան, վերափոխ. եկ., քար., 1863 թ. ծ. 1,226.

Վարեվան, վերափոխ. եկ., քար., 1843 թ. ծ. 367.

Դուբցխ, յանուն ս. Աստուածածնի, քարաշէն, 1856 թուին, ծուխ 429.

Խօլգումօ, յանուն ս. Սաանխալաի, քարաշէն, 1861 թուին, ծուխ 295.

Բավրա, յանուն ս. Խաչի, քար., 1788 թ. ծ. 310.

Քարթիկամ, յան. ս. Աստուածածնի, քարաշէն, 1843 թ. ծուխ 758.

Տօրիա, յանուն ս. Աստուածածնի, քարաշէն, 1793 թ, ծուխ 305.

Ուչմանա, յանուն Յովհաննու Մկրտչի, քարաշէն, 1851 թ. ծուխ 317.

Էշտիա, յանուն ս. Աստուածածնի, քարաշէն, 1835 թուին, ծուխ 1429.

Վարգավ, եկ. գտնվում է մասն. տան մէջ. ծ. 115.

Ինէլա, եկեղեցին մասնաւոր տանը. ծուխ 50.

Ամբողջ յայորդութեան մէջ ծխոց թիւն է 6,721։

3) ԼՕՌՈՒԱՑ ՅԱՋՈՐԴՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՔԸ

Գյուղերում.

Շահնազար, յանուն ս. Յովհաննու Մկրտչի, քարաշէն, 1862 թ. ծուխ 1560.

Մեծ Ղարաքլիսա, յանուն ս. Աստուածածնի, քարաշէն, 1855 թ. ծուխ 795.

Փոքր Ղարաքլիսա, յանուն ս. Սաանխալաի. քարաշէն, 1855 թ. ծուխ 415.

Սարչանէթ, յանուն Փրկչի, քար., 1842 թ. ծ. 558.

Շիշթափա, յանուն Փրկչի, քար., 1869 թ. ծ.487։

Ամբողջ յայորդութեան մէջ ծխոց թիւն է 3,815.

4) ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼՒՒ ՅԱՋՈՐԴՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՔԸ

Գյուղերում.

Տափօթօլակ, յանուն սրբոյն Գէորգայ, քարաշէն, 1842 թուին, ծուխ 764.

Ղարաքլիս, յանուն ս, Աստուածածնի, քարաշէն, 1852 թուին, ծուխ 605.

Պօլուէթլի, յանուն Յովհաննու Մկրտչի, քարաշէն, 1845 թուին, ծուխ 458.

Քօվթօրլի, յանուն ս. Աստուածածնի, քարաշէն, 1845 թուին, ծուխ 896.

Ղազանչ, յանուն վերափոխման ս. Աստուածածնի, քարաշէն, 1866 թ. ծուխ 414.

Մուսլուխլի, յանուն ս. Աստուածածնի, քարաշէն, 1857 թ. ծուխ 538.

Գիրխ, յանուն սրբոյն Ստեփաննոսի, քարաշէն, 1866 թ. ծուխ 377.

Շիշթափա, յանուն Փրկչի, քար., 1860 թ. ծ. 349.

Ծիթէլի, յանուն Փրկչի, քար., 1873 թ. ծ. 235.

Դերագև, յանուն Փրկչի, քար., 1867 թ. ծ. 160.

Թիթօլի խարաբա, եկ. մասնաւոր տան մէջ։ Ծ. 195.

Ղօրբուլաղ, եկ. մասնաւոր տան մէջ. ծուխ 460.

Ամբողջ յայորդութեան մէջ ծխոց թիւն է 5,845.

Իսկ բոլոր չորս յայորդութեանց մէջ հայ կաթօլիք դաւանութեան պատկանող ծխոց թիւն է 22,774։

5) Արտաքինու. եպիսկոպոսական վիճակում եկեղեցեաց թիւը անյայտ է. ծխոց թիւը տասներկու հազարից անցնում է, որոնք բաղկանում են զանազան ազգութիւններից, որոց մէջ կան բազմաթիւ հայեր։

Տիրասպօլու թեմը պարունակում է իւր մէջ ամբողջ Կովկասն և Սամարեան, Սարատովու, Աստրախանի և Եկատերինօսլաւեան նահանգներն ու Բեսարաբիան։ Առաջնորդութեան սահմաններում հաշվում են.—82 լաթին քահանայական ծուխ և 44 հայ կաթոլիք. եկեղեցիք լաթինական 147, հայկաթոլիքական 44 և երկու մատուռ։ Տիրասպօլու թեմի ծխոց թիւը մօտ 220 հազար հոգի է երկու սեռի, որոնցից 145,000 գերմանա-

ցիք են, 40,000 լեհ և չեխ (մեծ մասամբ գինուոր), 5,000 ֆրանսիացի, իտալացի և այլ ազգութեանց անձինք և 23,000-ից առաւել հայեր։ Այս թուից Կովկասին բաժին է ընկնում 35,119 լատին կաթոլիք, և 34,603 հայ-Լուսաւորչական, ընդամենը 69,722 հոգի երկու սեռի, այսինքն մօտ մի հինգերորդ մասը Տիրապետող թեմի ամբողջ կաթոլիքների։ 1884 թուին հռոմէական-կաթոլիքների թիւը նախընթաց 1883 թուից աւելացել էր 4,776 հոգով, իսկ հայ կաթոլիքների թիւը 921-ով, այսինքն 4%, չհաշուելով Արտուինեան թէմը, որովհետև հաւաստի տեղեկութիւններ չունինք սորա մասին։

***

Որպէս զի կարելի լինի կայսերութեան միւս ուսումնարանների նման միատեսակ հսկողութիւն ունենալ ու միևնոյն ուղղութիւն մտցնել դաստատութեան մէջ, վճռուած է այս օրերումս՝ Լիֆլիանդեան նահանգի աւետարանչ.-լուտերական ծխական ու գիւղական ուսումնարանները, իսկ Էստօնսկի և Կուրլեանդսկի նահանգների գիւղական ժողովրդական ուսումնարանները և հոգևոր դպրանոցները ենթարկել ազգային լուսաւորութեան նախագահին։

***

ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Նկարչութիւնը այն գեղեցիկ արուեստներից մէկն է, որ զարգացնում է մարդուս ճաշակը, ազնուացնում է նորա միտքը, սովորեցնում է նորան սիրել բնութեան գեղեցկութիւնը։ Սա ազգին վերոյիշեալ արուեստի այդուբենն է։ Ռուսաստանի ուսումնարանները վաղուց սրտին զգացել են դորա անհրաժեշտութիւնը և նուիրել են հարկաւոր ուշադրութիւն։ Նկարչութեան ուսուցիչները, չնայելով նորան, որ նրանց առարկան սիստեմատիկաբար են անցնում, այնուամենայնիւ իւրաքանչիւրը ուսուցանում է իւր ձևով։ Թէ ինչ սիստեմներով կամ ինչ մեթոդով են անցնում, թողնենք այլ անգամուան և գառնանք նորան, ալ առիթ տուեց ինձ այս խօսքերը գրելու։

„Մեղու Հայաստանի“ լրագրի № 100-ի մէջ տպուած առաջնորդողում պ. յօդուածագիրը առաջարկում է հայոց դպրոցների հոգաբարձութիւններին. „շատ լաւ կը լինէր, որ նորա կարգադրէին նկարչութեան դասերին նկարել տալ աշակերտներին մեր հին հայկական ճարտարապետական քանդակները և գրուագները“։ Սորա նպատակութեան համար նա ասելացնում է. „Ներսիսեան դպրանոցի ուսուցիչ՝ պ. Շամչինեանը կամ այլ ոք, որ հմուտ է նկարչութեան մէջ մեծ ծառայութիւն կարող էր մատուցանել, եթէ միայն մէջից տուէր ուսումնասիրել և նկարել հնագոյն քեկորները վերայ մնացած քանդակները և նկարները“։ Համակրելով վերոյիշեալ յօդուածի էական միտքը ես ինձ թոյլ եմ տալիս մի քանի խօսք ասել։

Նախ՝ պ. յօդուածագիրը ուզում է, որ մեր դպրոցներում նկարչութիւնը մի առանձին հայկական ուղղութիւն ունենայ։ Միտքը գեղեցիկ է։ Սակայն ցաւալին այն է, որ մեր դպրոցներից շատերը դեռ ևս վայելում են այդ դասերի բացակայութեամբ։ Նոյն իսկ, Գէորգեան Ճեմարանը, որ համարվում է անդրանիկը մեր դպրոցներից, շրջապատուած պատմական հրաշալի տեսարաններով, կպած նոյն իսկ էջմիածնին, դեռ ևս զուրկ է նկարչական դասերից, ուր մնաց այն բևեռման, որ ցանկանում է մտցնել մեր բարեմիտ յօդուածագիրը։ Էլ չեմ յիշում Շուշա, Սբ. Խաչ և այլ քաղաքների դպրոցները, որտեղ կամ չեն անցնում նկարչութիւնը, իսկ եթէ անցնում են այն էլ շատ ողորմելի կերպիւ։

Երկրորդ՝ ինչ վերաբերվում է այն խորհրդին, որ տալիս է պ. յօդուածագիրը Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեանը, այն է՝ „որպէսզի ապագայում դասընթաց մտցնէ“, միայն այսքանը կասենք, որ եթէ ում է դրողը ծանօթ չէ թէ յիշեալ դպրանոցի յարգելի հոգաբարձութիւնը և թէ պ. ուսուցիչը վաղուց արդէն ուշադրութիւն են դարձրել դրան և ձեռք էլ են բերել բաւականաչափ դրուագներ, որոնց մէջ կան և քանի մի հատ հայկական ճարտարապետութեան։

Ի վերջոյ չուժ ցանկալի կը լինէր, որ մեր միւս դպրոցներում դեռ ևս մտցնէին նկարչութեան այդ կարևոր դասերը, ապա թէ խօսել նորա կատարելագործութեան և հայկական ճարտարապետութեան մասին, որը արդէն ժամանակի գործն է։

Մ. Բոյաճեան։

28 դեկտ. 1885 թ. Թիֆլիս։

***

Մեզ խնդրում են հրատարակել հետևեալը.

Շաբաթ օրը յունուարի 4-ին 1886 ամի ժամը 11-ին մեծ իշխանուհու Օլգա Ֆեոդորովնայի Տփխիսի իգական գիմնազիայի դահլիճում կ՚լինի առաջին ընդհանուր ժողովը նոր հիմնուած «Տփխիսի ընկերութեան փոխադարձ օգնութեան վարժուհեաց և դաստիարակչուհեաց»։

Պարապմանց առարկաները. 1) ծանօթութիւն կանոնագրութեան հետ. 2) ընտրութիւն նախագահուհու, գանձապետի, քարտուղարի, վարչութեան անդամների և նոցա կանդիդատների. 3) ընկերութեան գործունէութեան նախագիծը 1886 թուի։

Այն անձինք, որոնք կը կամենան լինել ընկերութեան անդամ, կարող են անդամակցութեան տոմսակը ստանալ նոյն օրը գիմնազիայում։

*
* *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Խմբագիր։ „Արձագանքի“ № 24-ի Ներքին տեսութեան մէջ ակնարկել եք մի ոմն Քամալեանի վրայ, որը Պոլսոյ բարբառից Թարգմանել է Պեշիկթաշլեանին „Ներք քաջեր“ վոդեվիլը մեր գրական լեզուի։ Ձեր սրամիտ նկատողութիւնը ծանօթներս, բարեկամներս լինէ են վերագրում։ Խոնարհաբար կը խնդրեմ՝ յայտնէք ձեր թերթի միջոցով, որ այդ Քամալեանը ես չեմ։

Ընդունեցէք և այլն

Սարգիս Քոմալեանց.

28 դեկտ. 85 թ. Տփխիս.

*
* *

Լիբավայլ Թերթերի տեղով Բաքուայ կերոսինի գործածութիւնը այնպիսի արագութեամբ է տարածվում, որ ամերիկական կերոսինի վաճառումը օր ըստ օրէ վայր է ընկնում։ Այսպէս, օրինակ, պ. Վելիգի առևտրական տունը համարեա թէ ամենայն օր երկաթուղով Նօբէլի կերոսինի ամբողջ գնացքները է ստանում. այդ տարանքի մեծագոյն մասը գնում է Լիբավայից Անգղիա։

ՓԵԼԻԵՏՕՆ

ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԸ *)

ՇՎԱՅԳԵՐ-ԼԵՐՔԵՆՖԵԼԴԻ

(Գերմաներէնից)

Փոքր Ասիայի մէջ բնակուող քրիստոնեայ ազգերից ամենահետքրքրելին Հայերն են։ Հայերն՝ որպէս ազգերի իրանեան գերդաստանի անդամ՝ Ասորեստանի առաջին թագաւորութեան ծագումից ի վեր մասնակից են եղել Փոքր-Ասիայի արևելեան մասում պատահած նշանաւոր պատմական դէպքերին։ Նոցա աւանդութիւններն շատ հին են։ Հայոց նահապետն է Յաբեթի թոռն՝ Հայկ։ Նա անցկենում Արարատեան նահանգից դէպի հիւսիս և իւր բոլոր ցեղով բնակվում է Արաքսի ռաւդած երկրի մէջ, ուր հանդիսանում է իբրև առաջին քաղաքների հիմնադիր։ Նորան յաջորդում են մի քանի կէս առասպելական թագաւորներ։ Բուն պատմական անձնաւորութիւններն յառաջ են գալիս միայն սկսեալ երկրորդ Ասորեստանեայց թագաւորութիւնից, որ տևում է հազար տարի։ Վանի բևեռագրերն յիշատակում են Շամիրամին և Խէրքսին։

Երկար ժամանակ Հայերն մնում են Արշակունեաց և Սասանեաց իշխանութեան տակ։ Հայաստանը մի առանձին փայլ է ստանում մանաւանդ Բագրատունեան թագաւորների օրով։ Դժբախտաբար ազգի տեղափոխութեան ժամանակ մէջին դարերում սելջուկները, մոնղոլները, թաթարներն և այլն Հայաստանի միջից անցնելով՝ շատ վնաս են տալիս այդ երկրին . . . Բայց և այնպէս Հայոց ազգն պահպանում է իւր որոշ անհատութիւնն. դորա պատճառն էր մասամբ նոցա միաբանութիւնը, ազգային ոգին և հայրենասիրութիւնը. մասամբ էլ նոցա ճոխ գրականութիւնն, որ նորերումս մշակուել է մխիթարեան ուխտի գիտնական հայրերի ձեռքով։

Հայերի մէջ ամեն բանից շատ աչքի է ընկնում նոցա ընտանեկան կեանքի նահապետական պարզութիւնը։ Բոլոր իշխանութիւնն ընտանեաց գլխի ձեռքին է։ Թէպէտ ընտանեաց իւրաքանչիւր այր անդամ պարտական է ինքն անձամբ փող վաստակել, բայց բոլորի արդիւնքն կազմում է մի ընդհանուր ընտանեկան եկամուտ, մի տան ստացուածք։ Որդիներն այնպիսի յարգանք և մեծարանք են ընծայում ծնողներին, որ այս հաստատուն ընտանեկան կարգն ոչ մի բանով չէ կարող այլայլուիլ և եղծուիլ. կոպիտ անհնազանդութեան օրինակներ հազուադէպ են. դոքա ամենամեծ ոճիր են համարվում։ Ընտանեաց գլուխն որ մեռնի՝ նորա տեղը բռնում է աւագ որդին, ստեպ էլ հանգուցեալի այրին, պատճառ որ կինն ազատ դիրք ունի հայոց մէջ։

Ոչ մի կին Արևելքում այնքան ազատութիւն չէ վայելում, ինչպէս որ վայելում է հայկուհին։ Մինչդեռ Հայաստանի շուրջն ապրող ազգերի մէջ աղջիկների վաճառումն մի սովորական բան է,—դորա հետքն անգամ չէ նշմարվում հայերի մէջ. հայ աղջիկն ոչ վանդակներ գիտէ, ոչ էլ վարագոյրներ։ Նա ազատ է ման գալիս և նորան չէ արգելուած յարաբերութիւն ունենալ երիտասարդների հետ ի հարկէ պատշաճի սահմաններում։ Ուստի զարմանալի չէ, որ Հայերն, չընայելով իրանց կարծր, գործնական և շահասէր բնաւորութեան, ստեպ սիրուց են ամուսնանում։

Աղջիկներն ամուսնանում են ամենամատաղ հասակում։ Հազուադէպ բան չէ 14 և 15, երբեմն էլ 12 տարեկան հարսեր տեսնելը. իսկ տղամարդիկ շատ են հարս ճարել տրդէն տասնուէթ տարեկան և ամենաուշն՝ քսան տարեկան հասակից։

Հայոց պսակն զուրկ չէ մի քանի արևելեան սովորոյթներից։ Պսակի օրից սկսեալ նորատի կինն բոլորովին կզգիանում է ընտանեաց մէջ։ Նա պարտական է ծածկել իւր դէմքն և իրանն, անգամ տան մէջ. նա չէ կարող խօսել մինչև անդամ կանանց հետ, թէ և դոքա ամենամերձաւոր ազգականները լինէին, իսկ ուր հարկը ստիպէ՝ նշաններով պէտք է յայտնէ իւր միտքը։ Այսպիսի լռութեան նա դատապարտուած է մինչև առաջին մանկան ծնունդն, որ միջոցին իրաւունք ունի միայն իւր ամուսնի հետ խօսելու. առաջին ծնունդից յետոյ նորան թոյլ է տրվում խօսակցիլ զոքանչի, ապա մօր և տալի և հետզհետէ ընտանեաց և միւս անդամների հետ։ Լիակատար անձնական ազատութիւն ստանալու համար սահմանուած միջանկեալ ժամանակն տևում է երբեմն հինգ կամ վեց տարի։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ արամբի կընոջ համար առաւել մեծ անպարկեշտութիւն է համարվում օտար տղամարդոց հետ խօսելն կամ տանից անքող դուրս գալը։ Երբ որ հիւր գայ՝ կինն իսկոյն թաքչում է։ Ընտանեաց արու անդամներն երբէք չեն ճաշում կանանց և աղջիկների հետ միասին. տանտիկինն պատրաստում է սեղանի համար ամեն բան և հեռանում է մի առանձին սենեակ, ուր կանայք ժամանակ

) Հանում ենք այս փոքրիկ յօդուածն անուանի հեղինակի „Die Fraú“ կոչուած պատկերազարդ մեծ գրքից, որի մէջ նա խօսում է աշխարհիս ամեն ազգերի կանանց մասին։ Հայ ընթերցողն նոր բան չի գտնիլ ի հարկէ այս յօդուածի մէջ. բայց և այնպէս մեզ թւում է թէ տարբի կարծիքների հետ մեր մասին ծանօթանալն երբէք աւելորդ չի լինիլ։

փ. վ.

են անցկացնում իրանց ազգական և բարեկամ ընկերուհիների շրջանում։

Հայուհիները առ հասարակ գեղեցիկ են։ Նոքա ունին խոշոր խոշոր, սևորակ, երբեմն և կապուտակ՝ քնքոյշ փայլով ցոլացող աչքեր։ Երեսների դոյնը սպիտակ է, մորթը թարմ և թաւշային, որ սակայն ժամանակով կարմրանում է և կոշտանում։ Գեղեցիկ են մանաւանդ նոցա կապտասև մազերը։

Արևելեան տարազի գոյնզգոյն շորերը շատ են սազ գալիս հայ կանանց։ Նոցա ճաշակով նախամեծար են կարմիր կամ խայտապղետ բաց գոյնի մետաքսները։ Այդ նիւթերն և մանաւանդ զգեստի վայելչութեան համար գործուած զարդերն երբեմն շատ թանդ են նստում։ Հանդերձի գլխաւոր մասերն են՝ կարմիր փոխան, պարեգօտ և կապալի նման երկայն արխալուղ։ Գլուխը զարդարվում է փոքրիկ ոսկեճամուկ գլխարկով, որից քող է կապվում։ Հայկուհիները բոլորն էլ պաճուճանք սիրող են։ Նոցա ազգային զարդը բաղկանում է արևելքում սովորական դրամէ մանեակներից, որոնք կամ հերքի մէջ են հիւսվում, կամ գլխարկից կախվում։ Եթէ այդ տեսակ զարդերի պաշարն առատ լինի, այն ժամանակ կուրծքն էլ, ձեռքերն էլ ոտքամով յարդարվում են։ Արևի լուսին պսպղող ծիրանեգոյն շալվար հագած, իրանը ոսկենկար պարեգօտով և սիրուն արխալուղով պատուած և երեսին էլ թափանցիկ քող ձգած հայ կինը ներկայացնում է այնպիսի մի արևելեան գեղուհի, որից առաւել հաճելի բան հազիւ թէ կարելի լինի ցանկալ։

Սակայն չընայելով իւր պաճուճասիրութեան՝ հայ կինը պատուական տնտեսուհի է։ Նա անխոնջ է—մի յատկութիւն, որ իբրև սեփական է ամբողջ հայ ազգին։ Այր մարդիկ աշխատում են գոյք վաստակելու և ճոխացնելու. կանայք փոյթ են տանում տան կարգը պահպանելու և տնային պէտքերն բարուոքելու։ Հայերն գողտր ամուսիններ են։ Մինչև անգամ չինական հայ մարդը թոյլ չի տալ, որ կինը դաշտում աշխատի և արևակէզ լինի.... Մենք խօսում ենք ի հարկէ բուն հայկուհու մասին, որ դեռ ծանօթ չէ արևմտեան կարգերի և քաղաքակրթութեան արգասիքների հետ։ Նոքա առ հասարակ չեն կարանում լաւ պատուաստուիլ արևելեան ազգերին։ Հայ կինը, դոցա ճաշակն առնելուն պէս՝ իսպառ փոխվում է (այս երևոյթի զգուելի օրինակը տեսնում ենք Կ. Պօլսում),—դառնալով մի այլանդակ արարած, մի խառնուրդ արևելեան կիսակրթութեան և եւրոպական սովորոյթների, որոնք այս տեղ լոկ կապկութեան ձև են ստանում։ Երեք և կէս միլլիօն հայերի մեծագոյն մասն նստած է իւր հայրենիքում. մնացեալները ցրուած են աշխարհիս բոլոր երեք մասերում և ամեն ուրեք, հրէաների պէս, պարապում են վաճառականութեամբ, որից յառաջ եկած հարստութիւնները մեծ փութով պահպանում են ընտանեաց համար։ Փոքր Ասիայի բոլոր ծովեզերեայ քաղաքների մէջ կան բազմաթիւ հայ դերդաստաններ, մանաւանդ Տրապիզոնի և Զմիւռնիայի մէջ։

Այս տեղ հայերն մրցակցում են մի ուրիշ քրիստոնեայ ազգի, այն է՝ յոյների հետ։ Յոյն կանանց մասին մեր խօսքը յետոյ կըլինի. այժմ միայն մի փոքրիկ նկատողութիւն կ'անենք։ Ի մեծ վիշտ հայերի՝ ոչ թէ նոքա, այլ յոյներն են քաղաքակրթութեան և լուսաւորութեան ներկայացուցիչ համարվում Անատոլիայի արևմտեան ափերի վերայ։ Հարկաւ չէ կարելի մեր տեսակէտից դատել այդ յոնիական արանց և կանանց, որոնք միայն արտաքուստ են ծածկուած եւրոպական կրթութեամբ, այն էլ շատ բարակ պատեանով։ Նոցա բոլոր կրթութիւնը ֆրակի և ցոլուն կիսակօշիկների մէջ է, իսկ կանանց մէջ կրթութիւնը չափվում է միայն դաշնամուրի զնգզնգոցով, աղճատ ֆրանսերէնի կոտրատմամբ և փարիզեան սնգուրով։ Յոյներին և հայերին բնածին առևտրական ոգին սպանում է նոցա մէջ ամենայն ինչ ձգտումն դէպի իդէալականը։ Ինչպէս բոլոր արևելեան ազգերի, այնպէս էլ յոյների համար աշխատանքը—լուսաւորութեան այս խմորը—մի անարգ, անվայել բան է. այս պատճառով նոցա գործնական կեանքն էլ մի առանձին դրոշմ ունի։ Միայն մի բանի մէջ են յառաջադիմութեան քայլ արել Փոքր Ասիական հայերն և յոյները—այդ է դպրոցական գործի և առ հասարակ դաստիարակութեան մէջ։ Գիտութեան պէտքն, Եւրոպայի քաղաքակրթութեան հետ ծանօթանալու հարկը ստիպում է արևմտեան Եւրոպայի մայրաքաղաքները գնալու հարուստ վաճառականների որդիներին, և շատերն էլ իրաւ գնում են։ Բայց այս տեղ էլ, ըստ արևելեան սովորութեան, նոքա արտաքուստ են նայում ամեն բանի վերայ և վերիվերոյ, առանց ի միտ առնելու, որ ամենայն ինչ որ կայ Եւրոպայում միլլիօնաւոր ձեռքերի անընդհատ աշխատութեան արդիւնք է։ Մի ազգ, որ ինքն կրթութիւն չունի, կարող էլ չէ հասկանալ ուրիշինը, ոՀւր մնաց—գնահատել ըստ արժանւոյն։ Ինչպէս որ երեխան ապշած նայում է արուեստական իրերի վերայ և պատմում է տեսածների մասին, առանց խելամուտ լինելու, թէ ինչքան ուսումն, չանք, աշխատանք և ճգունք էին հարկաւոր այդ իրերն յառաջ բերելու համար,—այնպէս էլ մանկաբար է նայում եւրոպական լուսաւորութեան վերայ Փարիզի և Լօնդօնի մայթերը չափչփող ասիացին։

Ի վերջոյ մի ակնարկ ձգենք Զմիւռնիայի հայոց և յունաց թաղի վերայ։ Նոցա և տաճիկների տներն սաստիկ տարբերվում են իրարուց։ Այդ տներն աչքի զարնող արտաքին ձև չունին, նոցա ճակատներն անշուք են և անզարդ. սակայն ամեն ուրեք թագաւորող մաքրութիւնը, լուսափայլ կճածեփը, սիրուն պատշգամներն վայելուչ երկաթէ սիւներով պատկերացնում են մի հաճոյական տեսարան։ Դրեթէ ամեն մի տուն ունի մի արձակ

նախագաւիթ, որ սկսվում է գլխաւոր մուտքից, և այս պատճառով սենեակներն ոչ թէ դեպի փողոց են նայում, այլ առաւելապէս դէպի տան յարակից պարտէզը: Այդ գաւիթներն ոչ դատարկ են, ոչ էլ ապարդիւն ընտանեաց համար, վասն զի տնային մեծաւ մասամբ այն տեղ են անցկացնում օրուայ տաք ժամերն: Եւ որպէս զի այդ գաւիթների մէջ նստելն առաւել ախորժ լինի՝ նոցա որմերը զարդարվում են ծաղիկներով և պատատուկ բոյսերով: Նախագաւիթներում դրուած են ընտիր կահ կարասիք, հանգստութեան թախտեր և մինչև անգամ կարգալու և կարի փոքրիկ սեղաններ: Եթէ կամենաք, կարող էք անարգել դիտել փողոցից երիտասարդների կեանքը գերդաստանի մէջ. միայն մի փոքրիկ ծառապատնէշ անջրպետ կըլինի ձեր և առ հասարակ բազմաթիւ հասարակութեան միջև: Օրիորդներն և նորատի կանայքն, որոնք կամենում են ամենահրապուրիչ և գրաւիչ կերպով երևնալ իրանց բարեկամներին, ստեպ նստում են փողոց նայող պատուհանների մէջ՝ շրջապատուած երփներանգ ծաղիկներով, նշենու ոստերով և դափնեվարդի փունջերով: Ահա այդ տեղ են հիւսվում այն սիրալիր յօդերն, որոնք իրանց էութեամբ միևնոյն են ամբողջ երկրագնդի վերայ: Հասկանալի է ուրեմն, թէ ինչո՞ւ Փոքր Ասիայում ճանապարհորդող համեստ ուղևորն, կամ երիտասարդ գիտնականը առաւել շատ Զմիւռնիայի մէջ է դեգերում, քան թէ միւս քաղաքներում:

Բայց Զմիւռնայի կինը մի գաշտի շուշան է, որ «ոչ չանայ և ոչ նիւթէ... և հայրն երկնաւոր զգեցուցանէ զնա»: Սակայն Զմիւռնիայում հետզհետէ անհետանում է պատուհանից «սէյիր անելու» սովորութիւնը: Իրանց գեղեցկութիւնը կամ հագուստի պերճութիւնն ի տես հանելու տենչացող կանայք յաճախ դուրս են գալիս տներից եւրոպացի գաղթականների նման ծովափի վերայ ճեմելու համար: Այս տեղ «Ցօնիական մարգարտի» —սրևելեան Նէապօլի եզերքում ծփծփում է խայտապղետ կենսասէր բազմութիւնը, ինչպէս որ նոյնը լինում է Հերմէսեան փողոցի մէջ Աթէնքում, կամ թէ կ. Պօլսի Grande rue de Pera կոչուած փողոցում:

Փ. Վ.

ՎՐԱՑ ՀԻՆ ՔՐՈՆԻԿՈՆ

(Շարունակութիւն)

Այսպէս, ուրեմն Վրաց հին տարեգրութեան դպրութիւնը, նախ քան XIII-դ դարը, միանգամայն աներկբայելի է: Հայոց այս հին Թարգմանութեան և Վախտանգեան լմբագրութեան հանեմատութիւնից, թէպէտ և վերջինս իր ստուգութեամբ մի քանի անգամ գերազանցում առաջինը, երևում, որ երկու լմբագրութեանց բովանդակութիւնը իրօք համանման է: Միայն շատ խրտղութիւններ՝ կարճառօտ հաղորդուած հայերէն Թարգմանութեան մէջ, Վախտանգեան լմբագրութեան մէջ աւանդվում են բառերի աւելի մեծ քանակութեամբ, թէ և դորանից ոսքա պարզագոյն չեն դառնում: Նոյնպէս և ճառերը, որ դրուած են մի քանի անձանց բերանը, անհուն կերպով երկարացուցած են. չետոչ ոչ մի բնագրութեան յատկանիշ գիծ չէ աւելացրած հայերէն Թարգմանութեան մէջ աւանդուած խրտղութեան մանրամասնութեանց վերայ: Պէտք է կարծել թէ, Հայոց Թարգմանութիւնը աւելի մօտ է աւանդում հին՝ այժմ կորած վրացերէն բնագիրը, քան թէ Վախտանգի լմբագրութիւնը, ուղղագրուած XVIII-դ. դարու սկզբում: Բայց միևնոյն ժամանակ հաստատութեամբ չէ կարելի պնդել, որ Հայոց լմբագրութիւնը բառացի Թարգմանութիւն լինի, և ոչ թէ համառօտ քաղուածք վրաց հինսկզբնական Քրոնիկոնից:

Հայոց Թարգմանութիւնը վրաց հին տարեգրութեան, կամ Հայկական Քրոնիկոնը, ինչպէս կոչում էր դորան Բառոսէ, և ինչպէս մենք ևս կոչելու ենք կարճութեան համար, հասուցած է մինչև 1125 թուականը, այսինքն է մինչև Դաւիթ Նորոգչի մահը, ըստ երևութին, չէ աւարտուած, վասն զի ամենայն ձեռագրերում ընդհատվում բառն կիսում: Վա նոյնպէս Թարգմանուած է [1]) ակադեմիկ Բառոսէի ձեռքով, ինչպէս և Վախտանգի լմբագրութիւնը: Որովհետև երկու Թարգմանութիւնն ևս հրատարակուած են միևնոյն ձևով, այս պատճառով համեմատաբար դիւրին է խօսել նոցա մեծութեան մասին: Հայկական Քրոնիկոնը մեծ չէ և բովանդակում իւր մէջ 60 լի էջեր, այն ինչ Վախտանգի Տարեգրութիւնը մինչև այն տեղը, ուր վերջանում Հայերէն Թարգմանութիւնը, այսինքն է մինչև 1125 թ. բռնում 381 էջ, ուրեմն, նոքա վեց անգամ աւելի ընդարձակ են Հայկական Քրոնիկոնից: Բայց այստեղ ուշադրութիւն պէտք է դարձնել այն իրողութեան վերայ, որ նախ և առաջ՝ 381 էջերից—13-ը Վախուշտի յառաջաբանն բռնում, գրուած Մոսկվայում 1745 թուականին և երկրորդ՝ մնացեալ 368 էջերի, դեռ մի վոքր կէսը, իբրև պ. Բառոսէի ծանօթութիւններ, պէտք է արտաքսել, այնպէս որ Վախտանգի բուն խմբագրութիւնը կբռնէ 180 էջերից վոքր ինչ աւելի և կյարաբերուի Հայկական Քրոնիկոնի մեծութեան իբրև 3:1-ին: Բայց այս յարաբերութիւնը ևս առաւել կնուազի, եթէ մենք երկու խմբագրութիւններից ևս դուրս հանելու լինենք վրաց քրիստոնէութիւն ընդունելու վերաբերեալ ինքնուրոյն աւանդութիւնը և Թողնենք տարեգրութեան միայն այն մասերը որոնք հետաքրքրութեան պիտի ներթարկվին սոյն յօդուածում:

Սակայն մեզ դուք հարցնեն՝ թէ ինչու մենք Հայկական Քրոնիկոնը կոչում ենք ոչ ինքնուրոյն շարադրութիւն, այլ միայն Թարգմանութիւն Վրաց հին—սկզբնական տարեգրութեան:

Բացի վերոյիշեալ Հայոց հեղինակների վկայութիւնից, Հայկական քրոնիկոնը մենք կոչում ենք Թարգմանութիւն, և ոչ թէ բնագիրը՝ այն հնման վերայ ցենլով, որ վրացերէն հետքերը շատ ակներև կերպով նշմարվում են նոցա վրայ: Նախ և առաջ Թարգմանութեան հեղինակը, իբրև անտեղեակ մարդ, կարևոր է համարել աւանդելու Հայոց բառերով այնպիսի տեղերը անուններոը, որոնք գտնվում էին Վրաստանի սրտում և ապա ուրեմն պիտի կրէին ճիշդ վրաց անուններ: Այսպէս զորօրինակ: Տիէ—տբա, Յիսեդիդ Ուվիլա—ցխէխ, Դէգա—ցխէխ և այլ անունները, նա Թարգմանում է Հայոց բառերով, որ նշանակում են՝ անտառային

[1]) Տես Additions et Ecclairciss.

լինճ, մեծ ամրոց, տանուտիրական ամրոց, մայր-ամրոց, այ-սինքն քաւաղ Թարգմանուլեաննէ Վրաց կոչմանց, այն լինչ քուն քնագրի մէջ տեղական անուանակոչումները պահ-պանուած կլինէին, իբրև յատուկ տեղական անուններ: Եր-կրորդ շատ յատուկ անուններում, որոնք ունէին առանձին հայկական ձև, նա պահպանել է վրաց տեղական յատ-կը եթ, գօրգինակ, Ղազարեթ, Յովհաննեթ փոխանակ Խա-զիրք, Վրկան: Երրորդ՝ Վրաց եկեղեցական նշանագրերում շ և ը գիրը շատ նման են միմեանց: Թարգմանիչը, հաւա-նական է որ քաջ տեղեակ չլինելով այս այբուբենին, ը գրով աւանդում է այնպիսի անուններ ուր պէտք էր որոնել շ գիրը: Գործինակ. նա գրում է Բիուաք, Արբակ, Արտաբիր, փոխանակ Շիուաշ, Արշակ, Արտաշիր եւայլն: Սակայն Վրաց գրագիրներն էս նոյն սխալն էին անում, չաճախակի գրելով Արբակ փոխանակ Արշակ: Այսպիսի հետքեր, որոնք ապա-ցուցանում են թէ Հայկական Քրոնիկոնը Թարգմանուլեին է Վրաց հին տարեգրուլեան, բաւականին շատ են:

Մի և նոյն ժամանակ Հայկական պատճէնը, իբրև ա-ւելի հին, ներկայացնում է ոչ պակաս տարբերուլիւններ, որոնք թեթեւացնում են Վրաց նոր պատճէնի մուտ տեղերի ըմբռնելն և մատակարարում են լաւագոյն ընթերցանու-լիւն մի քանի անուններին, որոնք հանդիպում են Վախ-տանգի լամբագրուլեան մէջ:

Ի նկատի ունենալով Վրաց հին տարեգրուլեանց բացա-կայութիւնը ներկայումս, կարելի էր ենթադրել թէ՝ նոքա չհային XVIII դարու սկզբումն և և թէ Վախտանգի լսմ-բագրուլիւնը չօրինուած է Հայերէն Թարգմանուլեան վրայ չենլով (ինչպէս կարծում էին Ֆլօրիվալ և Դաք. Այվազեան), վասն զի ինքն Վախտանգը նոր յառաջաբանում ակնարկում է Հայոց գրքերից ազած քաղուածքների վրայ: Բայց շատ տարբերուլիւններ, որոնք աւելի ճիշդ են կարգացվում քան թէ նոքա ձօա՝ Հայերէն Թարգմանուլեան մէջ, ստանիկիչ են լինում այն հանգամանքի վրայ, թէ Վախտանգը օգտ-վել է յատկապէս ոչ թէ Հայերէն Թարգմանուլիւնից, այլ վրաց հին քնագրից:

Ինչ և իցէ, ներկայ ժամանակս Հայկական քրոնիկոնը, նոր հնուլեան շնորհիւ, պիտի բռնէ կարած քնագրի տեղը և մենք մեր հետազօտուլեան հիմքը դնում ենք դորա, չէ թէ Վախտանգի պատճէնի վրայ, անդադար համեմա-տելով այն Վախտանգեան տարեգրուլեանց փրանսերէն Թարգմանուլեան հետ:

Դառնանք այն խնդրին թէ՝ երբ գրուած պիտի լինէր վրաց հին տարեգրուլիւնը, որ հասել է մեզ Հայերէն Թարգմանուլեամբ: Մենք արդէն տեսանք, թէ Վարդան և Սեբէոսեան դիտէին դորա մասին XIII դարու սկզբում ու վերջում: Բուն իսկ ձեռագիրը (Հայերէն) աւարտուում է մի անցքի պատմուլեամբ, որ տեղի է ունեցել XII դարու ըս-կզբում: Մինչև անգամ նորա վերջին էջերը չեն պատահում Վախտանգի մօտ և կազմում են ոչ թէ Թարգմանուլիւն, այլ ինքնուրոյն պատմուլիւն Թարգմանչին ժամանակա-կից իրողուլեանց:

Արդ, տարեգրուլիւնը չօրինուած չէր կարող լինել XIII-դ դարուց ուշ: Բնագրում հանդիպող յաւելուածը, որ ասում է, իբր թէ տարեգրուլեան առաջին մասն՝ նախ քան Վախտանգ-Դուրգասլան՝ գրուած է զանազան ժամանակ-ներում, իսկ Վախտանգից մինչև ուրբն Արչիլ VIII դարու սկզբում գրել է Զեվանշիրը, հաշիւ թէ ստոյգ լինի: Եթէ մենք թոյլ ևս տայինք թէ, սրբոյն Արչիլի վարքը գրուած է VIII դարու սկզբում, այն ժամանակ հարկադրուած կլի-նինք ենթադրելու, թէ դա դասլուելիւն ունէը առանձին և թէ առաջ էէր մտել տարեգրուլեան շարքը: Իսկ լինչ որ վերաբերվում է այս դարձուածքին՝ թէ „պատմուլիւնը մինչև Վախտանգ I օրերը գրուած է զանազան ժամա-նակներում“, մենք չգիտենք, թէ դորանով լինչ էր կամե-նում ասել հեղինակը: Եթէ հեղինակը ի նկատի ունէը ար-տայայտել այսպիսի միտք, թէ տարեգրուլեան սկիզբն յօրինել են զանազան անձինք մինչև Վախտանգ I (V-դ) կամ նաև մինչև սրբոյն Արչիլի մահը (VIII), մենք դորա հետ բնաւ չենք կարող համաձայնիլ հետևեալ պատճառ-ներից դրդուած.

Բոլոր տեղեկուլիւնները Քրոնիկոնի առաջին մասում աւանդուած են այնպէս անորոշ կերպով և այնպիսի հա-մարակ դարձուածներով, որ ընթերցողը նոցա մէջ ոչ մի ակ-նարկ չէ նկատում հեղինակին ժամանակակից իրողուլեանց մասին: Մեզ դրօրինակ յայտնի է պատմուլիւնից շատ դէ-պուածները Խաղրաց մէջազետեան հիւսիսային Կովկասից և Վրաստան և Հայաստան և դորա վերաբերվում են զա-նազան սրշեալ ժամանակամիջոցներին: Տարեգրուլեան մէջ նոյնպէս պատահում են տեղեկուլիւնները Խաղրաց արշաւանաց մասին դէպի Վրաստան 1500 կամ աւե-լի տարի Քրիստոսից առաջ, բայց ընթերցողը չէ կարող ընդունել, թէ երբ և ինչ ժամանակ և ինչպիսի հանգամանքնե-րում, որ յայտնի լինելին ուրիշ աղբիւրներից, տեղի կարող էին ունենալ այդ արշաւանքները: Դարձեալ, շատ յատուկ անուններ, որոնք պատահում են այս մասում (նախ քան քրիստոնէուլիւն ընդունելն), ըստ իրեանց ձևերի հաւմա-լեան, վերաբերվում են ետին Արաքացւոց ժամանակին: Գոր. հին Պարտաւ քաղաքը արդէն Արաքացիներից ետոյ կոչուեցաւ Բարդաւ: Տարեգիրքը Արրանի էպոնիմը ստեղծել է ոչ ըստ հնի, այլ ըստ նորագոյն ձևի անուան—Բարդաւ: Այսպէս, Մինջաւետ՝ միայն Արաքացւոց տիրապետուլեան ժամանակ կոչուեցաւ Այջեվիք. այն լինչ Քրոնիկոնում, և և Տարեգրուլեանց մէջ այս կոչումը պատահում է այնտեղ, ուր խօսվում է IV և V դարուց մասին: Ցետոյ Մխիթարը, որին Տարեգիրքը ընծայում են 77 տարի Թադաւորուլիւն (265—342 Քրիստոսից ետոյ), տարեգրի վկայուլեամբ յա-ջաճախել է Բաղդատ քաղաքը, որ ինչպէս յայտնի է, հիմ-նուեցաւ Արաքացւոց յայտնուելուց շատ ետոյ: Նոյն կեր-պով Խորով Պարվիզին անանուն հեղինակը կոչում է Քեսրա, այսինքն այնպէս, ինչպէս փոխոխեցին այդ անունը Արաբացիք:

Այսպիսի ապացոյցներ՝ թէ Տարեգրուլիւնը ծագել է Արաքներից ետոյ, արդարև, շատ չեն, բայց այնուամենայ-նիւ կան: Իսկ Քրոնիկոնի աւելի վաղ յօրինելու մասին նը-պաստաւոր փաստերը բնաւ չկան: Սակայն այսպիսի ակնար-կուլիւններով մենք սահմանափակելու չենք մեր կարծիքը: Տարեգրուլեան մէջ պատահում են աւելի հաւաստի նը-շաններ, թէ երբ կարող էր յօրինուած լինել սկզբնական տարեգրուլիւնը:

Քրոնիկոնի անհայտ հեղինակը մեզ ներկայանում է իբրև անտեղեակ և տհաս մարդ: Նա, լինչպէս երևում է, ծանօթ էր Խորենացւոյ և Ագաթանգեղոսի երկասիրուլեանց և միայն չատ փոքր գիտէր Թագաւորաց Մատենի (Շահ-Նամէ) բովանդակուլիւնը, բայց նա օգտուել էր ոչ թէ նոցա քնա-գրից, այլ բերանացի աւանդուլիւնից, լինչպէս մենք մատ-նանիշ կանենք դորա վերայ Քրոնիկոնի բովանդակուլեան քննուլեան ժամանակ: Նորա ասյն իսկ ծանօթուլիւնը Շահ-Նամէի բովանդակուլեան, որին հեղինակը դիմում է իբր տարեգրուլեան առաջին էջերում, հաստատում է մեր

կարծիքը, թէ Տարեգրութիւնը XI դարուց առաջ երբեք չէր կարող գրուած լինել. վերը մենք արդէն նկատեցինք թէ՝ դա չօրինուած չպիտի լինի XIII դարուց ուշ: Այսպէս, ուրեմն, մենք այն եզրակացութեան պիտի գանք, թէ անանուն, այժմ ընագրի վերայ գոյութիւն չունեցող, Վրաց Քրոնիկոնը չօրինուած պէտք է լինի XI և XIII դարերի միջում, և Հաւանական է թէ XII դարում, որոյ սկզբում ընդհատւում է Հայկական Քրոնիկոնը:

Հեղինակի միամտութիւնը և տհասութիւնը միանգամայն զարմանալի են: Նա ոչ միայն չգիտէ այն, ինչ որ աւանդում են Վրաստանի մասին կլասսիկական հեղինակները, այլ և այն ինչ որ պատմում են Վրաց պատմութեան չետին ժամանակների մասին Բիւզանդացւոց և Հայոց պատմիչները, որոնք շատ իրաղութեանց վերայ լռութեամբն իսկ ակնառութեամբ: Նա չէ հաղորդում ոչ մի ազգային աւանդութիւն, որ, անշուշտ, գոյութիւն ունէր նորա ժամանակ: Ընդհակառակն, Խորենացւոյ օրինակին հետեւելով, նա մինչև անգամ խորշում է դորանից, դիմելով քաղուածքներին գրքերից (Խորենացւոյ և Շահ-Նամէի ծանօթներին), և հնարելով ազգաբանութիւն, որ ոչինչ բանին չէ կարելի յարմարացնել: Ամենայն քայլափոխում վիճաբան սխալանքները հետեւումն ոչ պակաս վիճաբան հակաճառութեանց և այս այն աստիճանին, որ Քրոնիկոնի առաջին բաժնում հազիւ թէ կարելի է գտնել դէթ մի իրաղութիւն, որ ճշմարիտ պատմական նշանակութիւն ունենայ: Տարբեր դաղափարների բացակայութիւնը պատմութեան վերաբերութեամբ հեղինակին մօտ նշմարւում է մանաւանդ նորա նում, որ մի բան պատմելիս, նա ի նկատի չէ առնում ոչ համաշխարհային պատմական իրաղութիւնները, ոչ ժամանակագրութիւնը: Այս պատճառով նորա տեղեկութիւնները օդից են կախուած ու տակը հող չունին: Մեր արտայայտած կարծիքը հաստատելու դիտաւորութեամբ՝ ներ ածենք սոյն Քրոնիկոնից մի քանի քաղուածքներ. որոնք մի կողմից, ցոյց են տալիս հեղինակի միամտութեան յատկանիշ բնաւորութիւնը, իսկ մեւսից—նորա հայեացքը պատմութեան և իր ժամանակակից ընթերցողների մասին: Առնենք Փրկչի յայտնուելու ժամանակին: „Անդրիկ Թագաւորի առաջին տարում Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում ծնաւ Յիսուս Քրիստոս: Մցխեթա քաղաքի Հրէից մէջ լուր տարածուել էր, թէ Պարսից Թագաւորները տիրապետել են Երուսաղէմին: Այս լուրը մեծ տրտմութիւն պատճառեց նոցա: Բայց երկու տարուց չետոյ նոքա իմացան, թէ Թագաւորները եկել են ոչ թէ Երուսաղէմն տիրանալու, այլ ընծայ տալու նորա ծնած մանկան, երեսուն տարուց չետոյ Հրէաստանից ապրհանդակ եկաւ Հիւսիսային-արեւելք (այսինքն է Մցխեթա) և յայտարարեց (տեղացի Հրէից), թէ մանուկը, որին մոգերը ընծայ մատուցին, զարգացել է և լուրեան Ոսկի Աստուծոյ է հրատարակել: „Այսպէս, ասումէ նա, Թող մեր ազգից իմաստուն, օրհնագէտ մարդիկ ժողովուրդն և գնանք մեսիային այս գործի առթիւ խորհրդակցելու [1]) “ Ընթերցողը տեսնում է, որ հեղինակը շատ հնարագէտ չէ: Իսկոյն այդ տեղեկութիւնից չետոյ, մենք կարդում ենք՝ մի և նոյն ժամանակ Պարսիկները ապստամբեցան Մակեդոնացւոց դէմ (այդ էլ Քրիստոսի ծնունդից չետոյ!) և իրենց համար Թագաւոր ընտրեցին Աժիան իմաստունին (?!): Ճշմարիտ է, Վախտանգի իմաստասիրութեան մէջ չկայ „Մակեդոնացւոց“ բառը, բայց դա չէ նշանակում թէ՝ դա հնի ընագրումն էլ չկայ, սը նորագոյն իմաստասիրութիւնը, անշուշտ, ուղղագրութիւնները արած պիտի լինի: Վրաց իմաստասիրութեան մէջ միանգամակ Աժիանդրուած է Աժգալան, որով, հաւանական է, որ Տարեգրութիւնները կամին ասել Արշակունիք: Յայտնի է, որ Արշակունեաց հարստութիւնը հաստատուեցաւ 250 տարի նախ քան Քրիստոսի ծնունդը, ոչ թէ դորանից չետոյ:

(Կը շարունակուի)

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

ԻԲՐԵԻ ԴԱՏԱՒՈՐ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Սովորութիւն չունենալով, ահա՝ մի քանի տարի է, «Մեղու Հայաստանին» կարդալու, միմիայն այս օրերս լսեցի թէ՝ այդ լրագիրը այժմ սկսել է գիտնական (այն ևս ախտաբանական) հարցերի մէջ ձայն տալ և վճիռներ արձակել: Այդ կողմից չիշեալ լրագրի կարողութեան և ուղղութեան ծանօթ չ'լինելով, պարտք համարեցի ուշադրութիւն դարձնել սոյն տարուայ № 96-ի մէջ տպած մի քննադատութեանը:

Թիֆլիսում նորերումս Մ. Գ. Մկրտչեանց (յայտնի չէ, թէ պարոնը ինչ տիտղոս կրելու իրաւունք ունի Ռուսաստանում) իւր սեփական գրպանին դժուարութիւն պատճառելով՝ հրատարակել է մի առանձին տետր ռուսերէն լեզուով, որի մէջ գովաբանելով իւր անձնաւորութիւնը, իբր յոյժ գնահատուած բժիշկ Գերմանիայում և Մոսկուայում, պարսաւում է տիկ. Սուրգուչեանցի հիւանդութեան և մահուան առթիւ՝ տեղւոյս համարեա բոլոր բժիշկների տգիտութիւնը,—հայ, ռուս, լեհացի, գերմանացի—բոլորին 'ի մի խումբ խառնելով:

Այս ռուսերէն տետրը ահա մի ամիս է լոյս է տեսած և հեղինակի կարգադրութեամբ գրավաճառանոցներում ձրիաբար բաժանվում է գրեթէ ամեն անցուդարձողի. բոլոր ռուս խմբագրութիւններին կապոյնեռով ուղարկուած է. սակայն ոչ մէկը արժան չ'համարեց գէթ մի խօսք գրելու այդ տետրի մասին: Հեղինակը վերջապէս վստահացել էր՝ չիշեալ տետրակների մի ահագին քանակութիւն ղրկել տեղւոյս Կայսերական բժշկական ընկերութեան նախագահին՝ խնդրելով սորան բաժանել բժշկաց մէջ: Ինչպէս լսեցինք ընկերութեան վերջի նիստում, երբ պ. նախագահը յայտնեց Հեղինակի նպատակը և նորա տետրի՝ ռ է կ լ ա մ ա կ ա ն և զրպարտիչ բովանդակութիւնը (զանազան բժշկական ցիտատներով քօղաւորուած) այնպիսի մի հարցի մասին, որի քննութիւնը մի տարի յառաջ ընկերութիւնը կատարած է վերջնական վճիռը կայացուցած, ոչ յօգուտ Մկրտչեանցի գիտութեան և արդարասիրութեան,—ընկերութեան բոլոր

[1]) Վախտանգի ընագրի մէջ այս ամենը մանրամասն է, բայց համառօտ մեկնողն է:

ներկայ եղող անդամները միաձայն վճռեցին՝ այդ տետրակները ամբողջովին վերադարձնել Հեղինակին՝ իր ընտրած փողոցային ճանապարհով բաժանելու նոցա միայն, որոնց համար գործի էությիւնը դեռ պարզ չէ...

Ահա այսպիսի մի ռուսերէն տետրը իրան գնահատող գտել է տեղւոյս պարբերական թերթերի մէջ միմիայն «Մեղու Հայաստանին».

Ինչպէս չասել իրաւ. գլորել է խուփը, գտել է պուտուկը՞:... .

Ահա ինչ ենք գտնում այդ լրագրի մէջ յիշեալ տետրակի մասին մանր լուրերի կարգում:

«Նոյեմբերումս ռուսերէն լեզուով հրատարակուեցաւ «Բացատրութիւնք Մ. Գ. Մկրտչեանի, տիկին Սուրգունեանցի հիւանդութեան և մահուան առթիւ» տետրակն, որ ձրի բաժանվում է ցանկացողաց Կենդրոնական գրավաճառանոցում»:

„Թիֆլիզին յայտնի է", շարունակում է խմբագիրը, „տիկին Սուրգունեանցի մահուան առթիւ ծագած փոթորիկը տեղոյս բժշկակ. ընկերութեան մէջ, գանգատանօք մեծ պ. Անահանցի մեծ պ. պ. բժ. Գասպարեանցի և Տէր-Մկրտչեանի դէմ"....

„Կարծես (!) հաշտարար գատաւորի մօտ ամեն ինչ պիտի վերջանար, երբ մեծ. բժ. Անահեանցն իւր գանգատը չետ առաւ, ինչ պատճառով (!) այդ իւր գիտնալիքն. բայց չէ (,) բժշկական ընկերութեան կազմած չանձնաժողովն այս գործի քննութեան համար պատրաստեց ընկերութեան համար առաջադրութիւն, որ և հրատարակուեցաւ ընկ. աբձանագրութեան մէջ":

„Ահա և մեծ. պ. բժ. (?) Մկրտչեանը, ճշմարտութիւնը վերականգնելու (?) համար. հրատարակեց վերստիչեալ տետրը, գիտնական բժշկապետը (?՞) առաւելապէս (?) պ. բժշկ թէ բժշկապետ Ա. Բաբայեվ-Բաբայանի գիտութեան մէջ ունեցած թուլութիւնն և անբարեխղճութիւնքն է ցոյց տալիս և ասում, որ չանձնաժողովը ոչ առանց կրքի է վարվել իւր քննութեանց մէջ, այլ և անխղճաբար ի չարը գործ դրել բժշկութեան մէջ հեղինակութիւն ունեցող անձանց անունը".

Քննենք այժմ «Մեղու Հայաստանի» խմբագրի թէ խմբագրապետի «բարեխղճութիւնքը» մի առ մի այս կտորում:

Նախ հարցնենք՝ եթէ պ. խմբագիրը իւր ընթերցողների համար հետաքրքրական էր համարում իւր յիշած բժշկական վէճի լուսաբանութիւնը, ինչի իւր ժամանակին ոչ մի տող չ'նուիրեց չանձնաժողովի այն տետրակին, որ լոյս տեսաւ Կայսերական Կովկասեան բժշկ. ընկերութեան խմբագրութեամբ և հաւանութեամբ, սորանից 7—8 ամիս յառաջ:

Մի՞թէ ամբողջ բժշկական ընկերութիւնը, որի իւրաքանչիւր նիստին մասնակցում են Թիֆլիզի ամեն կարգի բժիշկներ, մօտ 30—50 հոգի, սակաւ հեղինակութիւն պիտի ունենար մի խմբագրի աչքում, քան թէ մասնաւոր որ և է բժիշկ:

Կայսերական Կովկասեան բժշկական ընկերութիւնը այսօր Ռուսաստանի բժշկական մամուլի հայացքով՝ բոլոր այդ տեսակ գաւառական ռուս ընկերութեան կարգում առաջնակարգ տեղ է բռնում իւր գործունէութեամբ և իւր հրատարակութեանց քանակութեամբ և արժէքով. այս բանը չէր կարող անյայտ լինել մի տեղական խմբագրապետի. որը եթէ արգարասէր լինէր, պէտք է ծանօթացնէր իւր ընթերցողներին նախ և առաջ՝ այդպիսի մի հեղինակաւոր հաստատութեան՝ նոյն հարցի նկատմամբ արած մանրամասն քննաբանութեանը, և ապա իրան իրաւունք տար նորան հակառակ յօդուածներ տպելու իւր էջերում:

Ի՞նչի այդ բնական և ամենահասկանալի ճանապարհով չէ վարուել «Մեղուի» խմբագիրը:

Որովհետև, երևի թէ՝ բժշկ. ընկերութեան գեկուցումի եզրակացութիւնները մեր պ. խմբագրապետի անձնական՝ մասնաւոր համակրութեանց և հակակրութեանց ձեռնտու չեն եղել:

Գուցէ ասող լինի թէ՝ առանց այդ անձնական հայեցակէտի, «Մեղուի» խմբագիրը բժշկ. ընկերութեան մանրամասն քննաբանութեան մասին, կարելի է, չէ վստահացել՝ կարծիք յայտնելու, քանի որ մի քաղաքական՝ հասարակական թերթի խմբագիր իրան կարող էր անձեռնհաս համարել՝ ախտաբանական մանրակրկիտ հարցերի մէջ ձայն տալ, և սխալն կամ ուղիղը իրարուց ջոգել:

Եթէ այդպէս է, ապա ինչի այժմ նոյն խմբագիրը դատաւոր է կանգնած նոյն բժշկական հարցերում և ամենախիստ վճիռներ է արձակում իւր կողմից: Ի՞նչի մի Մկրտչ. տետր նա հռչակում է, իբրև «վերականգնումն ճշմարտութեան»: Ինչի Մ. Մկրտչեանցին նա վերագրում է այնպիսի տիտղոսներ («գիտնական բժշկապետ») որ նա կրելու իրաւունք դեռ չէ ստացել Ռուսաստանում և մեր հասարակութեան մէջ: Ի՞նչ իրաւունքով և ո՞ր սեփական դատողութեամբ «Մեղուի» խմբագիրը բժ. Գասպարեանցի դէմ բերուած ցիտատների մասին մեղադրում է բժշկ. ընկերութեան չանձնաժողովի անդամներին՝ իբր սոքա «անխղճմտաբար ի չարն են գործ դրել բժշկութեան մէջ հեղինակութիւն ունեցող անձանց անունը»:

«Մեղուի» խմբագրի այս հակասութիւնները շատ պարզ մեկնվում են: Մի ժամանակ «Մեղուն» դոկտ. Բաբայեանի աշխատութիւնները գովաբանողներից էր: Այն ժամանակից երբ Ա. Բաբայեանը՝ ամենաճանր հարուածներ տուեց «Մեղուի» խմբագրին, աշխատելով դադարեցնել սորա անբարեխիղճ և վերին աստիճանի թերի գործակատարութիւնը Ներս. դպրանոցի մէջ. միւս կողմով՝ այս և այն հասարակական հարցերի մէջ՝ մի քանի խիստ նկատողութիւններ յայտնեց «Փորձի» և «Արձագանքի» մէջ «Մեղուի» խմբագրի դէմ,—այդ ժամանակից, ասում եմ, Մկրտչեանցը չէ թէկուզ յետին կոշկակարը լինի կամ մի փողոցային զրպարտիչ,—որ միանգամ ընդդէմ դուրս գայ բժ. Բաբայեանի, անշուշտ

ամենասիրալիր ընդունելութիւն կգտնի «Մեղուի» էջերում։

Թիֆլիզի ընթերցող հայերին լաւ յայտնի է թէ՝ «Մեղուի» խմբագիրը ոխակալութեան ոգւով տոգորուած մինչև իսկ բժ. Բաբայեանի դէմ «պասկվիլներ» տպեց։ Ուրեմն՝ «Մեղուի» խմբագրի կէտ նպատակին այժմ էլ՝ ոչ թէ՝ իւր ընթերցողներին ճշմարտութիւնը պարզելն է մի գիտնական հարցի մասին, այլ՝ Մ. Մկրտչեանցի փողոցային տեսրից օգուտ քաղել դօկտ. Բաբայեանի դէմ հայհոյանք արձակելու....

Այս բանի ահա մի լիակատար ապացոյցն ևս։ Յիշեալ տետրը՝ իւր գրպարտութիւնները և պարսաւումները ուղղած է ոչ միայն Բաբայեանի, այլ առաւելապէս Աբռեմեվի, Անանեանցի դէմ, նաև Իլլինսկու, Հաուգելիի, Մինկեւիչի, Վարդանեանցի, Նաւասարդեանցի դէմ, վերջապէս՝ բժշկական ընկ. բոլոր անդամների դէմ։ Ի՞նչի այդքան անձինքներից «Մեղուն» ընտրել է միմիայն Բաբայեանին և նորա դէմ գրուածի վրայ յատկապէս մատնացոյց եղել....

Որովհետև, կ՚պատասխանենք, մէջ տեղը կիրք կայ։ «Մեղուի» խմբագրին առաջնորդողն այդ դէպքումն ևս ոչ թէ ճշմարտութիւնն է, այլ դարձեալ կիրքը, որով ղեկավարվում է թերթը։

Եւ այս ամենը պատիւ ունի հայերիս մէջ կոչուելու ԽՄԲԱԳՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ՞....

Այս ամենից յետոյ պարտաւոր ենք քննել թէ՝ որպիսի փաստով «Մեղուի խմբագիրը Մ. Մկրտչեանցի տեսրից համոզուել է թէ բժ. ընկերութեան յանձնաժողովը «անխղճաբար ի չարն է գործ դրել բժշկութեան մէջ հեղինակութիւն ունեցող անձանց անունը»։

Այսպիսի քննութիւնը մեզ մի փոքր հեռուն պիտի տանի և այդ մասին կ՚խնդրենք ներողութիւն «Արձագանքի» ընթերցողներից, երբ իսկապէս այդպիսի քննութիւնները առհասարակ ընդհանուր մտմտուքի գործ չեն։ Բայց քանի-որ «Մեղուն» Մ. Մկրտչեանցի տետրից ամբողջովին թարգմանել է, իբրև յանձնաժողովի անխղճութեան զօրաւոր ապացոյց, մի երկար ու ձիգ ծանօթութիւն զանազան ախտաբանական բառերով լի, —մենք ստիպուած ենք, առաւել պարզելով խնդիրը, ցոյց տալու թէ՝ այդ թարգմանութեան նպատակն է մոլորեցնելու մի յայտնի թիւ հայ ընթերցողների շատ մութ բառերի մի մութ ծանօթութիւնով։

Ահա ինչ տեղումն է խնդիրը։

Բժշկ. ընկ. գործի սկզբում՝ Գասպ. գիտութեան մէջ ունեցած հմտութեան մասին չուզենալով կասկած յայտնել, իբր նախկին վճիռում, նորա սխալը վերագրեց միմիայն ընկերական վատ մրցումի չար տրամադրութեան, որի հետևանքն էր քաղաքի մէջ՝ տիկ. Սուրգունեանցի մահուան օրը կայծակի արագութեամբ տարածուած լուրը թէ՝ ըստ վկայութեան Գասպ. Մկրտչ., դօկտ. Անանեանց և Գորալեվիչը տիկ. Սուրգունեանցին սպանել են իրանց դեղերով։

Բննելով դօկտ. Գասպարեանցի մանրամասն ճառը (որ արտասանած էր դատարանում իրան արդարացնելու համար) բժշկ. ընկ. եկաւ այն եզրակացութեան, որ այդ ճառից ևս առաւել հաստատվում է նորա ընկերական յարաբերութեանց չար տրամադրութիւնը. բացի այդ դուրս է գալիս, գիտնական տեսակէտից, մի այլ բան ևս, այն թէ՝ Գասպարեանցն, գոնեա այս հանգամանքում, ախտաճանաչութեան ճիշդ գիտնական մեթոդներին բոլորովին անծանօթ է երևում, նոյն իսկ իւր մասնագիտութեան մէջ։

Այս բանը բժշկ. ընկ. յանձնաժողովը հաստատում է շատ տպաւորիչներով։ Մ. Մկրտչեանցի տետրի մէջ բերած ծանօթութիւնը վերաբերում է միմիայն առաջի ապացոյցին, որը քննելու ենք այժմ և մենք։

Դօկտ. Գասպ. ասել էր իւր ճառի մէջ. «Եթէ ես ենթադրած լինէի տիկ. Սուրգունեանցի մէջ ժահրաւոր արեան վարակումն (ծննդականի նեխման հիւանդութիւն), ինչպէս բժիշկները կամենում են հասկանալ իմ վկայականս, ես այն ժամանակ անպայման մահուան նախազուշակութիւն չէի անիլ»։ Սորանով բժ. Գասպարեանցը կամեցել է ասել. եթէ նա այդ նախազուշակութիւնն արել է տիկ. Սուրգունեանցի հիւանդութեան ժամանակ, այդ կ՚նշանակէ անպատճառ (՞) թէ՝ նա ի նկատի է ունեցել սուր կորեակաձև պալարի արեան վարակումն (зараженіе ядомъ острой миліорной бугорчатки). «որովհետև, ըստ նորա ասութեան, գիտութեան բոլոր ներկայացուցիչները (կարիֆէները) այդ հիւանդութիւնից բուժեալների դէպքերը համարում են ախտաճանաչութեան սխալ»։ Այս կ՚նշանակէ, բժ. Գասպ. դատարանում պնդում էր թէ բժշկութեան ներկայացուցիչներից և ոչ մէկը թոյլ է տալի ոչ մի բացառական դէպք անգամ յիշեալ հիւանդութեան բուժման։

Իսկ յանձնաժողովը բերում է զանազան յիշատակներ դորան բոլորովին հակառակ, որոնցից մենք յիշենք այստեղ միմիայն յայտնի կլինցիստ Էյխհօրստի կարծիքը. սա ասում է՝ «մի քանի հեղինակներ ընդունում են կարելութիւն բուժման այդ հիւանդութիւնից (սուր կորեակաձև պալարալի թոքախտից) միւսները չեն ընդունում։ Յամենայն դէպս առողջանալ այդ հիւանդութիւնից պատահում է բացառական դէպքերում»։

Այս տեսակ ցիտատներից յետոյ բժշկ. ընկ. յանձնաժողովը յիշում է նաև յայտնի Ռիւլհէի կարծիքը, որը իրան պատահած նոյն տեսակ դէպքերի առողջանալը ինքը տրամադիր է մեկնել՝ իւր սխալմունքով ախտաճանաչութեան մէջ (յիշեալ հիւանդութիւնը ընդունելով այդ դէպքերում)։ Այս իւր անձնական կարծիքն է միայն, այն ինչ՝ ընդհանուր կլինիքական տեսակէտից՝ նա էլ խոստովանում է թէ՝ այդ հիւանդութիւնից

առողջանալու հարցը դեռ ևս պէտք է համարել բաց, այսինքն՝ դեռ գիտութեան մէջ հաստատ չ՛որոշուած»։ Ահա նորա այս միտքը յանձնաժողովը պարտական էր յիշելու ի շարս այլ ցիտատների։ Ռիւլհէն վճռական չ՛համարելով դեռ իւր կարծիքը՝ խնդիրը անորոշ է թողնում։ Եւ այս շատ բնական է, քանի որ Վունդերլիխի, Լէբերթի և այլ սոցա նման գիտութեան կարիքներ իրաւի ընդունում են յիշեալ ծանր հիւանդութիւնից առողջանալու կարելութիւնը։ Ռիւլհէյի գրածը այդ մասին ուրիշ կերպ հասկանալը ուրեմն՝ լիակատար բթամտութիւն կ՛լինէր...

Ընթերցողը թող չ՛մոռանայ, որ խնդիրը այստեղ յիշեալ հիւանդութեան ծանր՝ ըստ մեծի մասին մահաբեր լինելու վրայ չէ, որ ամենին յայտնի է,—խնդիրը անպայման մահաբերութեան վրայ է։ Ահա այս վերջի կարծիքը պնդելով, յանուն գիտութեան բոլոր կարիքների, յանձնաժողովի կարծիքով, բժ. Գասպ. ցոյց է տուել նախ՝ իւր անծանօթութիւնը այդ հարցին վերաբերեալ ամենամատչելի գրականութեան, երկրորդ՝ ախտաճանաչութեան մէջ իւր թուլութիւնն յայտնել, որ այդպիսի պատէ պատ, մանուածոյ ճանապարհով մի հիւանդութիւն իբր ճանաչելն է ապացուցանում, փոխանակ անմիջական շօշափելի փաստեր բերելու, որ գիտնական հնարներով են ձեռք բերվում։

Այս ամենից յետոյ իւրաքանչիւր բանիբուն ընթերցող ինքնին կարող է դատել՝ թէ՝ ո՛վ է ի՛ չարը գործ դրել՝ «բժշկութեան մէջ հեղինակութիւն ունեցող անձանց անունը». Գասպ. և Մ՛կրտչեանցը, թէ՝ բժշկ. ընկ. յանձնաժողո՛վը։

Այս ամենից յետոյ թո՛ղ ընթերցողը ինքը գնահատէ՝ «Մեղուի» խմբագրի հետևեալ սեփական խօսքերը՝ Մ. Մկրտչեանցի՝ Ռիւլհէյի նկատմամբ արած մոլորեցուցիչ ծանօթութիւնից յետոյ։

«Զարմանալին այն է, թէ՝ ի՛նչու յանձնաժողովն ունենալով իւր մէջ անդամ պ. Բաբայեվ-Բաբայեանի պէս հոգեբան գիտնական անձնաւորութիւն գիտութեան անուամբ խաղ խաղալ է ուզեցել»...,.. «անհնարին է մտածել թէ՝ յանձնաժ. արժ. անդամներն աշխարհս միամիտ կարծած լինին. ինչպէս իրանք էլ միամտութեամբ գործած չեն լինիլ իրանց սխալը։ Այս էլ ձեզ գիտութեան մարդիկ. որոնց յանձնվում է մարդուս կեանքը, որ սորա հետ արդարութեամբ և բարեխղճաբար վարվեն»։

Ի՞նչպէս չ՛շարունակել «Մեղուի» քննարերգական տրամադրութեամբ. «Այս էլ ձեզ խմբագի՛ր, որ երդուած է արդարութիւն և ճշմարտութիւն տարածել իւր թերթով, այս էլ ձեզ խմբագի՛ր, որ անձնական կրքերից բարձր պիտի պահէ իւր թերթը, այս էլ ձեզ խմբագի՛ր, որ իւր թերթը խաբեբաների և խարդախների բերան (օրգան) չ՛պիտի անէ երբէք. շանտաժով չ՛պիտի պարապի՛..... և այլն»։

Այսպիսի մի թերթի խմբագրի դէմ այսքան վիճաբանութիւնն էլ մեր կողմից մեծ պատիւ կ՛լինէր. եթէ խնդիրը չ՛վերաբերէր մի տեարի, որ ամբողջ 52 երես է կրում և բաւական մեծ ծախքի տեղիք է տուել հեղինակին ուղղագրողների հոգսը քաշելով և այլն....

Արժէ ուրեմն երկու խօսքով դէթ դառնալ այդ հեղինակին.

Հեղինակը իւր տետրով իւրեան շատ գիտնական անձն ուզում է ցոյց տալ. ամբողջ տարուայ ընթացքում մի հարցի մասին տասնեակ ցիտատներ գերմանական լրագրութիւնից դուրս գրելով. բայց նորա սոսկալի տգիտութիւնը գործի մէջ ակնյայտնի եղաւ նախ տիկ. Սուրգուչեանցի դիակնահատութեան ժամանակ, երբ Մ. Մկրտչեանց կարմրած երեսով՝ ճակատը թռած աչքերով՝ պինդ բռնած զաւակատան պատուսը Ընկերքի տեղը ամբողջ տասը րոպէ մի կին-բժշկի հետ վիճումէր թէ՝ «ահա տեսէ՛ք Ընկերքը մնացած է դեռ զաւակատնում...» Այս բանը մասամբ յայտնուեցաւ ռուս լրագրութեան մէջ և հաստատվումէ ներկայ եղող բժիշկների վկայութեամբ։ Սակայն հեղինակը իւր դէմ եղած վկայութիւնքը գրելու համար իւր տետրի մէջ մի շատ դիւրին հնար է գտել. այն է՝ երկու խօսք—«բժիշկները նորա դէմ նախանձ ունին.»

Երկրորդ՝ հեղինակը իւր լիակատար տգէտ բացատրութիւններով բժշկակ. ընկ. նիստում մինչև ողբալու աստիճան խայտառակուեց. այժմ պնդումէ թէ՝ բժշկ. ընկերութեան արձանագրութեանց մէջ իբր նորա խօսքերը աղաւաղած են։ Ո՛վ էր նորան արգելում այդ աղաւաղումները (եթէ իրաւ էր) ուղղելու յաջորդ նիստում. սորա պատասխան դարձեալ կարդումենք նոյն խօսքեր. թէ՝ բժշ. ընկերութիւնը վատ տրամադրուած էր դէպի ինքը, բժիշկները նախանձումեն Գասպ. յաջողութեան, Մ. Մկրտչեանցին էլ նորա հետ միացրին։ Խնդրեմ ասացէ՛ք ի՞նչի բժշ. ընկերութիւնը չէ նախանձել բժշկ. դոկտ. Ա.րտ. Իվ. Յովհաննիսեանի դէմ, երբ սա ամենից շատ Թիֆլիզում հիւանդներ է ունեցած, նորան՝ ընկերութեան փոխնախագահ է ընտրած իւր ժամանակ։ Ի՞նչի բժշկ. ընկ. ամենամեծ յարգանք ցոյց տուեց բժիշկ Յ. Մարկոսեանի թաղման առթիւ, չէ՞ որ Յովհաննիսեանից յետոյ այդ հայազգի բժիշկն էր ամենից շատ Թիֆլիզում գործ ունեցողը. ի՞նչի ընկերութիւնն, երբ առաջին տարին որոշեց մրցանակ տալ տարուայ միջի լաւագոյն աշխատութեան համար ի քաջալերութիւն, առաջին մրցանակ ստացողը եղաւ Մկրտչեանցից ոչ պակաս մասնաւոր պրաքտիքով պարապող՝ դոկտ՝ Մալսուրեանցը. ի՞նչի ընկերութիւնը իւր ատենադպրի փափուկ պաշտօնը յանձնած է եղել Մկրտչեանցից ոչ պակաս գործ ունեցող հայ բժշկի (դոկտ. Բաբայեանի), վերջապէս հայ բժիշկներից շատերը, (բժ. Ամիրեանց, (երբեմն նախագահ ընկ.), Բաստամեանց, Շահպարոնեանց, Լիսիցեանց,

Վերմիշեանց և այլն) համեմատաբար շատ պրագտիք ունենալու հետ՝ միշտ յարգուած են եղել տեղւոյս բժշկ. ընկերութեան օտարազգի անդամներից։

Ի՞նչի հարցանում ենք այդ միևնոյն ընկերութիւնը միմիայն երկու հայ բժշկի դէմ (Դասպարեանցի և Մրկրտչեանցի դէմ) նախանձ և վատ տրամադրութիւն է յայտնում...։

Ահա մի հարց, որի մասին կարժէր Մեղուի խմբագրին մի օր իւր ճգնաւորական վերնատան մէջ փիլիսոփայաբար երկար ու բարակ խորհելու՜...

Ըստ պ. Մկրտչեանցի և Մեղուի խմբագրի բժշ. ընկերութեան մոլորեցնում է այդ երկու բժշկների դէմ մի գլխաւոր նախանձորդ՝ բժ. Բաբայեանը՞...։

Եւ չ՚ե՞ն հաւկանում այդ մարդիքը թէ՝ իրանք՝ Բաբայեանին որպիսի մեծ բարոյական և մտաւոր յաժեր են վերագրում, որ նա կարող է իբր ամբողջ մի ընկերութիւն գիտնական անձանց՝ իւր ուզածով շարժեցնել...։

Այս ամենից յետոյ գալով հարցի բուն էութեանը, մենք պէտք է ասենք թէ՝ ոչ միայն Մկրտչեանցի տեսրը, այլև եթէ Դասպարեանցն էլ հարիւր դորանից լաւ տետրեր հրատարակէ, դարձեալ չ՚պիտի կարողանան, որքան և մանուածոյ, շինծու մեկնութիւնները բերեն, համոզել գէթ մի բժշկի և գիտնականի թէ՝ Դասպ. իւր ձեռով գրած տիկ. Սուրգ. թաղման վկայականի մէջ այլ միտք կարելի է ըմբռնել, եթէ ոչ—ծննդական ապեան նեխման ժահռաւոր հիւանդութիւն զաւակատան նեխեալ բորբոքումից յառաջացած։

Այս գրաւոր փաստը կայ և մնայ, իբրև մըշտական վկայութիւն Դասպ. և Մկրտչ. ախտաճանաչութեան մէջ կատարած սխալի, որի հետևանքը այնքան ծանր եղաւ թէ ողբալի Սուրգուճեանց և Զայգեշեանց դերդաստանների և թէ տեղւոյս բժշկական կացութեան համար։

Եթէ Դասպարեանցը ի չարն է գործ դրել Մկրտչեանցի կարծիքը (իբր զաւակատան աւելի մեղմ և անվտանգ բորբոքում, որի մասին մասնագէտները անշուշտ իրեանց կարծիքը յայտնած են և դուցէ դեռ ևս կ'յայտնեն), եթէ անումեմ, Դասպ. այդ կարծիքը ծուռն է դուրս բերել իւր վկայականի մէջ, Մկրտչ. թող Դասպարեանցի դէմ բողոքէր։ Գանի որ նա այդ չ'արաւ, ընականաբար՝ նա համախոհ է նորան և համագործակից։ Այդ պատճառով էլ նրա հետ սերտուած է այժմ ծանր լուծը քաշել...։

Կրկին անգամ ներողութիւն խնդրելով մեր ընթերցողներից այս մասնաւոր հարցի մասին այսքան երկարելներուս համար, մեր այդ մասին արդարանալու հիմքն այն է, որ մենք սորանից յետոյ այլ ևս իրաւունք չ'պիտի համարինք Մկրտչեանցի և tutti quanti-ի այդ հարցի վերաբերեալ նորանոր գրուածների առթիւ մեր ընթերցողներին ձանձրացնելու, քանի որ սոքա մեր վերը բերած հիմնաւոր կէտերի վրայ չ՚ուզեն լուսաբանութիւն տալ։ Իսկ «Մեղուի» նկատմամբ պարզ է այժմ թէ՝ գիտնական հարցերի մասին էլ անհնար է նորան ձեռք առնել։ Ուստի հայ մտածող դասին այդ թերթի վերաբերութեամբ ուրիշ բան չի մնում, եթէ ոչ՝ բոլորովին թողնել «մեռեալներին թաղել իւրեանց մեռեալը՞»։

Բժիշկ—Դ.

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

Հետևեալ համարի հետ իբրև առաջին յաւելուած կուղարկենք մեր 1885 թուի բաժանորդներին Յովհաննէս ա. քահանայ Մկրեանի՝ յատկապէս «Արձագանքի» համար պատրաստած մեր բանաստեղծ Մեսրովբ Թաղիաթեանի մանրամասն կենսագրութիւնը։ Այդ գրուածքը մօտ 160 երեսից բաղկացած մի աշխատութիւն է։

Կիւրակէ օրը վաղճանուեցաւ Թիֆլիսում նրաւատոր Սիմէօն Ալադատովը։ Հանգուցեալը, քաղաքային վարչութիւնը ընտրելով իւր պատուասէր գործունէութեան ասպարէզ, հետևում էր գրեթէ քաղաքի բոլոր խնդիրներում բարոյական ուղղութեան։ Իւր ամբողջ կալուածութիւնը, որ մօտ 130,000-ի է հասնում, նա թողել է իւր եղբօր երկու դուստրներին։ Բացի.... 300 րուբլու, որ նա նուիրել է Մաղնուոյ եկեղեցուն։

De mortuis aut bene aut nihil.

„Վրաչ“ լրագիրը Փարիզից ստացել է հետևեալ նամակը՝ նոյեմբերի 9/21-ին յայտնի գիտնական Պաստէօրը ստանում է Լիւբլինակի նահանգի Lubieczow քաղաքի բժ. Ստեցկուց մի նամակ որով այս վերջինը յայտնում է նորան, որ մի կատաղած գայլ կծել է 11 մարդ և 29 անասուն և նա խորհուրդ է հարցնում ինչպէս գործի *)։ Պաստէօրը շատ հետաքրքրուեց այս գործով, որովհետև կծողը գայլ էր և ոչ թէ շուն **) և նա անյապաղ հեռագրում է բժ. Ստեցկուն խնդրելով նորանից որ կծածներին բերի Փարիզ։ Բժ. Ստեցկին պատասխանում է թէ բոլոր կծուածներն էլ աղքատ են և կարողութիւն չունին ճանապարհածախսի համար։ Պաստէօրը նորից հեռագրում է որ ճանապարհածախսը առնում է իւր վրան։ Ստեցկին նամակով պատասխանում է որ հնարք չկայ շուտով արտասահմանի անցագիրը ստանալը։

---

*) Ինչպէս յայտնի է մինչև այժմ կատաղած անասունների կծածը անբուժելի է համարւում։ Պաստէօրը ահա շատ տարինեը է որ պարապում է այս բանով և նա վերջապէս այս տարի սեպտեմբերին յայտնեց Փրանսիական գիտութեան ակադեմիային որ նա գտած է դտել այդ ախտին դէմ։

Խմբ.

**) Պաստէօրը իւր փորձերը արել էր շան կծածների վերայ։

Այդ ժամանակ տղաներից մեկը եւս անասուններից երկուսը արդէն հիւանդանում են ջրավախութեամբ (կատաղում են)։ Միայն դեկտեմբերի սկիզբներին այսինքն անցքից 5 շաբաթ յետոյ Ստեփկին հաղորդում է որ վերջապէս անցագրերը ստացուել են, բայց Պատէօրը պատասխանում է որ արդէն ուշ է և նա այլ ևս չունի որ չաջողութիւն ունենայ սկսելով նոցա բժշկել։

Խմբագիրը-հրատարակիչ Ա. ՔԳԱՐ ՅՈՎ. ՀԱՍՆԻՍԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան Հայոց Աղգային Հոգեւոր Դպրանոցի հոգաբարձական խորհրդարանի մէջ յունվար ամսոյ 15-ին 1886 ամի, երեկոյեան 8 ժամին կը լինի աճուրդ (առանց կրկնաձրգի) կապալով տալու Նորակառոյց 18 հրապհները երանց նկուղներով, որք գտանվում են 3 Ալէքսանդրովսկի Թաղում Կուզնեցկի փողոցումը։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակէից և տոներից, ցերեկուայ 10—12 ժամին։

ՍՏԱՅՈՒԱԾ Է

Պ. ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆԻ (ՀԱՅԿԱԿԻ)

«ՆՈՐԱՎԷՊՔ»-Ը

Երեք պատկեր—Պատապարտեալը, Երազի մը գինը և Կատակ մը։

Գինն է 60 կ. օտար քաղաքացիք Հանապարհածախք վճարում են 15 կ., դրամարկ գնողները 10% զիջուն ունին։

Դիմել՝ Центральная книжная торговля въ Тифлисѣ.

Պատրաստվում է տպագրութեան համար և առաջիկայ 1886-ին լոյս կը տեսնի

«ՆԱԻԱԿ»

Պատկերազարդ ծաղկաքաղ

Փոքր և մեծին հասակի ընթերցանութեան համար։

„Նաւակը“ կազմած կը լինի երեք հատորից, իւրաքանչիւրում 200 մեծագիր երես. ուրեմն՝ „Նաւակը“ կը ներկայացնի երեսից 600 մեծագ. երեսներից կազմած մի շքեղ հրատարակութիւն։

„Նաւակ“-ի առաջին հատորը լոյս կը տեսնի տարուայ սկզբին, երկրորդը՝ մէջին և երրորդը՝ տարուայ վերջը։

Վաղօրօք ստորագրուղների համար Հանապարհածախսով 3 ռ. է, իսկ հրատարակուելուց յետոյ կարժենայ 5 ռ.։

„Նաւակ“-ի իւրաքանչիւր հատորը բովանդակութեան կողմից, երեք մասի է բաժանվում.

1. Զանազան վէպերներ, պատկերներ, Հանապարհորդութիւններ, մեծ մարդկանց կենսագրութիւններ, ժողովրդական աւանդութիւններ, բանաստեղծութիւններ և այլն։

2. Գիտութեան վերաբերեալ յօդուածներ—գլխաւորապէս բնագիտական։

3. Զուարճալիք-անեկդոտներ, մանկական խաղեր ևն։

Դիմել կարելի է հետեւեալ հասցեով՝ Тифлисъ, Садовая ул., д. Парумбегова, Габріэлю Зурабовичу Мирзоеву.

Նոյն իսկ հասցեով կարելի է ուղղել և նիւթերը տպագրութեան համար։ Անձամբ կարելի է տեսնուել ամեն նայն օր ժամը 5-ից մինչև 6-ը Հաշից յետ։

ОТКРЫТА ПОДПИСКА
НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ
„ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“
На 1886 годъ (9-й годъ изданія)

Въ 1886 году газета „Тифлисскія Объявленія“ будетъ выходить по прежней программѣ и подъ прежнею редакціею, ежедневно, кромѣ чиселъ, слѣдующихъ за воскресными и праздничными днями.

ПОДПИСНАЯ ЦѢНА

Съ доставкою въ Тифлисѣ:		Съ пересылкою иногородныхъ:	
На годъ . . .	3 р. — „	На годъ . . .	5 р. — „
„ полгода. .	2 р. — „	„ полгода. .	3 р. — „
„ 3 мѣсяца.	1 р. 25 к.	„ 3 мѣсяца.	2 р. — „
„ 1 мѣсяцъ.	— 50 к.	„ 1 мѣсяцъ.	1 р. — „

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи. Тифлисъ, на Барятинской улицѣ, домъ Ротинова.
Адресъ для иногородныхъ: Тифлисъ. Въ редакцію газеты „Тифлисскія Объявленія“.

ОТКРЫТА ПОДПИСКА
На ежедневную литературно-политическую газету
„КАВКАЗЪ“
на 1886 годъ (41-й годъ изданія).

Въ 1886 году газета „КАВКАЗЪ“ будетъ выходить по прежней программѣ и подъ прежнею редакцію ежедневно не исключая и понедѣльниковъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

Съ доставкою въ Тифлисѣ.	СЪ ПЕРЕСЫЛКОЮ	
	По Имперіи	по почтовому союзу
На годъ	11 р. 50 к.	13 р. . . . . 18 р. 40 к.
„ полгода . .	6 р. — „	7 р. . . . . 10 р. — „
„ 3 мѣсяца .	3 р. 50 „	4 р. . . . . 6 р. — „
„ 1 мѣсяцъ .	р. 50 „	1 р. 75 к. . . 2 р. — „

Подписка принимается исключительно въ Конторѣ редакціи. Тифлисъ, уголъ Головинскаго проспекта и Барятинской улицы, домъ Ротинова.

Для иногор. адресовать:
Тифлисъ, Въ Редакцію газеты „КАВКАЗЪ“
3—3

ОТКРЫТА ПОДПИСКА
на 1886 годъ
На ежедневную литературно-политическую газету
„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“
издаваемую въ ТИФЛИСѢ
(III годъ изданія).

ПРОГРАММА газеты общая всѣмъ литературно-политическимъ ежедневнымъ изданіямъ, съ возможно широкимъ развитіемъ мѣстнаго отдѣла.

Подписная цѣна съ доставкою и пересылкою въ Россіи: на годъ 10 руб., на полгода 6 руб., на 3 мѣсяца 3 руб. 50 коп., на одинъ мѣсяцъ 1 руб. 50 коп.

Подписка принимается: въ Тифлисѣ въ конторѣ редакціи при Газетномъ Агенствѣ В. ШАВЕРДОВА, въ С.-Петербургѣ книжномъ магазинѣ „Новаго Времени“. Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ въ контору редакціи „Новаго Обозрѣнія“, при газетномъ Агентствѣ В. Шавердова.

Редакторъ-издатель А. В. Степановъ.
3—3

КЪДРОННАКАН ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

Ի մէջի այլոց վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

		Р.	К.
1.	Շիրվանզադէ՝ Նամուս, եղերական վէպ.	1	—
2.	Խալաթեանց՝ Общій очеркъ Армянскихъ сказокъ	—	50
3.	Бараць՝ Полный курсъ Комерческой бугалтерій	5	50
4.	Փէշտիմալճեան՝ Պատմութիւն մարգկային պատուհասման	3	—
5.	Տիգինճեան՝ Գործնական համարակալութիւն	2	75
6.	Յարութիւն վարդապետ Ալամդարեան՝ Ձախաբերական	1	—
7.	Սրբ. Տիւտաք՝ Սիրանույշ, վէպ	2	25
8.	Չիլինգարեան՝ Ուղղութիւն է կ. Պօլիս	1	35
9.	Աբրիկարեան՝ Նորավէպք	—	60
10.	Բերիէ՝ Կեսար և Աստուած	—	20
11.	Քիշմիշեանց՝ Օրիորդ Բերոյեանց, կոմէդիա	—	50
12.	Պարոն Լքքօքի ծերութիւնը 4 հատոր	2	75
13.	Մկրտիչեան՝ Նկարագրական ուղղութիւն է հայ գաւառս	1	—
14.	— Նոյն հատոր երկրորդ	1	25
15.	Ալլահվերդեան՝ Ուչնեա կամ Զէյթուն	1	30
16.	Սրուանձտեան՝ Թորոս Աղբար. հատոր Բ.	1	50
17.	Պալեաճեան՝ Ձաշակ արդի հայ մատենագրութեան	—	65
18.	Մուրատեան՝ Ծաղիկ արդի մատենագրութեան կազմած.	1	—
19.	Շմիտէ՝ Դէորդ Վաշինգթօն երկրորդ տիպ	—	60
20.	— Բենիամին Ֆրանկլին երկրորդ տիպ	—	40
21.	Եանչուկ՝ Եան Էրնստ Սմոլեար.	—	20
22.	Հայ պետգաղուհի մը տպ. Փորթուգալեանի	—	25
23.	Ալիքեանց՝ Մի կաթիլ արիւն	—	20
24.	Բօլէ՝ Զեռնարկ շեթամապահութեան	—	10
25.	Մելիք-Շահնազարեանց՝ Անմշակ և մշակուած ծառի կեանքը	—	30
26.	Ակաֆա պատմական վէպ Հին յուն. և Հռոմ. կեանքից	—	50
27.	Գէօթէ՝ Հերման և Դորոթէա	1	30
28.	Սիւլիկ՝ Տիկին և նաժիշտ	—	30
29.	Ա. Ենոպրիուս՝ Հոկայ մըջիւն	—	40
30.	Աղայեանց՝ Անահիտ, Հին զրոյց	—	50

Օտար քաղաքացիք Ճանապարհածախք ուղարկում են մանկեթեն 15 կ.

ОТКРЫТА ПОДПИСКА

на грузинскую ежедневную литературно-политическую газету

„ИВЕРІЯ“

Съ 1-го Января будущаго 1886 г. издающійся въ Тифлисѣ ежемѣсячный грузинскій журналъ „Иверія“ преобразовывается въ ежедневную литературно-политическую газету „Иверія“, въ форматѣ листа большихъ ежедневныхъ литературно-политическихъ изданій. Въ программу, утвержденную правительствомъ, входятъ всѣ отдѣлы столичныхъ газетъ по всѣмъ вопросамъ политики, общественной жизни и литературы.

Газета будетъ выходить ежедневно, кромѣ дней, непосредственно слѣдующихъ за воскресными и праздничными днями.

Подписная цѣна газеты съ доставкой и пересылкой:

на 12 мѣсяцевъ	. . . .	10 р.	— к.	на 6 мѣсяцевъ	. . . . .	6 р.	— к.
„ 11 „	. . . .	9 „	50 „	„ 5 „	. . . . .	5 „	25 „
„ 10 „	. . . .	8 „	75 „	„ 4 „	. . . . .	4 „	75 „
„ 9 „	. . . .	8 „	— „	„ 3 „	. . . . .	3 „	50 „
„ 8 „	. . . .	7 „	25 „	„ 2 „	. . . . .	2 „	75 „
„ 7 „	. . . .	6 „	50 „	„ 1 „	. . . . .	1 „	50 „

За границу на годъ 17 руб., на полгода 9 руб. 50 коп.

За перемѣну адресовъ уплачивается: иногороднаго на иногородный—40 коп., городскаго на иногородный—1 руб.

Подписка принимается не иначе, какъ съ перваго числа каждаго мѣсяца.

Подписка и объявленія принимаются въ Тифлисѣ, въ помѣщеніи редакціи на Ново-Бебутовской улицѣ въ домѣ Зубалова № 9, въ газетномъ агентствѣ Шавердова, въ Центральномъ книжномъ магазинѣ, Головинскій проспектъ, д. Миримановa и въ книжномъ магазинѣ З. Грикурова (д. Зубалова, подъ гостинницею Лондонъ); въ Кутаисѣ—въ книжномъ магазинѣ бр. Чиладзе; въ Батумѣ—у М. Натадзе. Иногородные обращаются съ требованіями: *Тифлисъ. Въ редакцію газеты „ИВЕРІЯ“*

Редакторъ-издатель **князь Илья Чавчавадзе**

Дозв. Ценз. Тифлисъ. 30 Декабря 1885 г.
Типографія И. Мартиросіанца.



16—24

ԱՄԵՐԻԿԱՑԻ ԵՂԻԿԵՐՈՒԹԻՒՆ ՉԻՆԳԵՐԻ ԽԻՒ-ԵՕՐԿՈՒՄ
ԿԱՄՐԵՐԵՆՔ ԱՄԵՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ:
Մեր միջոցներով հնարաւոր եղաւ ստանալ մեր գործիքները օգնական նոր գործիքներով: Այդ մեքենաները կարող են կարել ամէն տեսակ կտորներ, ինչպէս նաև կերպասներ, մորթեղէն, կաշի, կօշիկ և այլն: Մեր մեքենաները ունեն ձևերի մեծ տեսակներ, որոնք կարող են կատարել ամէն տեսակ աշխատանք: Մեր մեքենաները ունեն ձևերի մեծ տեսակներ, որոնք կարող են կատարել ամէն տեսակ աշխատանք: Մեր մեքենաները ունեն ձևերի մեծ տեսակներ, որոնք կարող են կատարել ամէն տեսակ աշխատանք: